ՀՀԽ

հետազոտություն

ՀԵՌՈՒՍՏԱԴԻՏՈՂՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈԾՈՒՄՆԵՐԸ, ՆԱԽԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐԸ



ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՌՈՒՍՏԱԴԻՏՈՂՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈԾՈՒՄՆԵՐԸ, ՆԱԽԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐԸ

հեղինակություն

Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն (ՀՌԿԿ)-Հայաստան հիմնադրամ

Երևան 2025

«Հանրային հեռարձակողի գործունեության վերաբերյալ հեռուստադիտողների դիրքորոշումները, նախասիրությունները և ակնկալիքները» հետազոտությունն իրականացվել է Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն (ՀՌԿԿ)-Հայաստան հիմնադրամի կողմից՝ պետության կարիքների համար հանրային կարծիքի հարցման ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրով՝ Հանրային հեռարձակողի խորհրդի պատվերով: Զեկույցի բովանդակությունը միայն հեղինակների պատասխանատվությունն է և պարտադիր չէ, որ արտահայտի Հանրային հեռարձակողի խորհրդի տեսակետները:

Զեկույցի կամ դրա առանձին մասերի վերահրատարակումը կամ վերարտադրությունը էլեկտրոնային կամ տպագիր տարբերակներով պետք է իրականացվի պատշաճ մեջբերումներով:

Մեջբերման օրինակ.
Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան հիմնադրամ (2025): Հանրային հեռարձակողի գործունեության վերաբերյալ հեռուստադիտողների դիրքորոշումները, նախասիրությունները և ակնկալիքները, Երևան: Հանրային հեռարձակողի խորհուրդ:

© Բոլոր իրավունքները պաշտպանված են: ՀՌԿԿ-Հայաստան 2025:

Կապ. crrc@crrc.am | crrc.am

Հեղինակ

Արուսյակ Ոսկանյան

Խմբագիրներ

Լիլիթ Եզեկյան

Հայկ Սմբատյան

Սեդա Անանյան

Հետազոտական խումբ

Արուսյակ Ոսկանյան

Անժելա Ղալամդարյան

Սրբուհի Միչիկյան

Աստղիկ Գրիգորյան

Ռուզաննա Օսիպյան

Անուշիկ Ոսկանյան

Անի Սահակյան

Միլենա Սարգսյան

Լիա Կասեմյան

Լուիզա Թորոսյան

Բովանդակություն

Հապավումների ցանկ 5

Բաժին 1. Հետազոտության համատեքստը և մեթոդաբանությունը 6

Համատեքստը 6

Հետազոտության շրջանակները 9

Նպատակը 9

Խնդիրները 9

Ընտրանքը 10

ՖԽՔ-ների մասնակիցների ընտրության սկզբունքը 10

Տվյալների որակի ապահովում 10

Էթիկական նկատառումներ 11

Սահմանափակումներ 11

Բաժին 2. Հիմնական արդյունքներ 13

2.1. Հանրայինի հասարակական դերը և կերպարը (իմիջը) 13

2.2. Հանրայինի դիտման մոտիվացիաները, դիտողների ընդհանուր հատկանիշները և չդիտելու պատճառները 16

2.2.1. Առաջին ալիքի դիտման մոտիվացիաները և դիտողների ընդհանուր հատկանիշները 16

2.2.2. Հանրայինը չդիտելու հիմնական պատճառները 19

2.3. Առաջին ալիքի բովանդակության վերաբերյալ արձագանքներն ու ակնկալիքները 22

2.3.1. Առաջին ալիքի բովանդակության վերաբերյալ արձագանքները 22

2.3.2. Ակնկալվող բովանդակության ձևաչափերը, ժանրերը և թեմատիկ ուղղությունները 24

2.3.3. Հեռուստադեմքերի մասին վերաբերմունքն ու պատկերացումները 27

2.4. Ամփոփում 28

Օգտագործված աղբյուրների ցանկ 30

Հավելված 1. Տվյալների հավաքագրման գործիք 31

Հավելված 2. Ֆոկուս խմբային քննարկումների ամփոփ աղյուսակ 33

Հավելված 3. Համաձայնության թերթիկ 34

Հավելված 4. Արձանագրության նմուշ 35

Երախտագիտության խոսք

Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն (ՀՌԿԿ)-Հայաստան հիմնադրամն իր երախտագիտությունն է հայտնում Հայաստանի տեղական ինքնակառավարման մարմիններին (ՏԻՄ) և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին (ՔՀԿ)՝ տվյալների հավաքագրման ընթացքում շարունակական աջակցության համար:

Առանձնահատուկ շնորհակալություն ենք հայտնում նաև ֆոկուս խմբային քննարկումների մասնակիցներին՝ իրենց արժեքավոր կարծիքը կիսելու համար:

Հապավումների ցանկ

ՀՌԿԿ	Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն
ԿԲ	Կովկասյան բարոմետր
ՓԲԸ	Փակ բաժնետիրական ընկերություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմիններ
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն
ՖԽՔ	Ֆոկուս խմբային քննարկում

Բաժին 1.

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Համատեքստը

Հեռուստատեսությունն ավելի քան վեց տասնամյակ կարևոր դեր է ունեցել Հայաստանի հասարակական, քաղաքական և մշակութային կյանքում: Չնայած վերջին տասնամյակում հեռուստատեսության դերը՝ որպես Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունների մասին տեղեկատվություն ստանալու հիմնական աղբյուր նվազել է՝ այնուամենայնիվ, այն շարունակում է մնալ առաջնային աղբյուրը: Ինչպես փաստում են ՀՌԿԿ-Հայաստանի կողմից իրականացված «Կովկասյան բարոմետր»-ի (այսուհետ՝ ԿԲ) տվյալները՝ 2021 թ.-ին 42% արդյունքով հեռուստատեսությունը համարվել է տեղեկատվություն ստանալու հիմնական աղբյուր, իսկ 2024 թ.-ին՝ թեև պահպանել է առաջատարի դիրքերը, սակայն ավելի ցածր արդյունքով՝ 34%[1]:

Գծապատկեր 1. ԿԲ. Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունների մասին տեղեկատվություն ստանալու հիմնական աղբյուրը:



1. Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն. (2024 և 2021) «Կովկասյան Բարոմետր Հայաստան», https://caucasusbarometer.org/am/cb2024am/factsheet/:

Հեռուստատեսության ոլորտում առանձնահատուկ դեր ունի Հանրային հեռարձակողը, որը հիմնադրվել է Կառավարության կողմից փակ բաժնետիրական ընկերության ձևով՝ «Հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ[2]: Հանրային հեռարձակողի գործունեությունը կարգավորվում է «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքով, որի համաձայն Հանրային հեռուստաընկերությունը ղեկավարվում է օբյեկտիվության, ժողովրդավարության, անկողմնակալության, բազմազանության, բազմակարծության սկզբունքներով և ապահովում է կարծիքն արտահայտելու իրավունքի, խղճի, մտքի և դավանանքի, ինչպես նաև ստեղծագործական ազատությունը: Հանրային հեռուստաընկերությունը մասնավորապես պարտավորվում է.

- օրվա եթերաժամը հատկացնել հայերեն տեսալսողական հաղորդումներին՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի,
- ապահովել հեռարձակվող տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանությունը:

Բացի այդ՝ Հանրային հեռուստաընկերությունը պարտավոր է մշակել և իրականացնել ծրագրային քաղաքականություն, որը պետք է ուղղված լինի հետևյալին.

ա) հանրային առավել հնչեղություն ունեցող տեղեկատվության համար օգտագործել ամենադիտելի եթերային ժամանակը՝ ներկայացնելով ինչպես պաշտոնական տեղեկատվությունը, այնպես էլ տարբեր կարծիքներ,

բ) մատուցել հաղորդումներ, որոնք արտացոլում են ՀՀ տարբեր տարածաշրջանների, ազգային փոքրամասնությունների և հասարակության տարբեր շերտերի ու սոցիալական խմբերի շահերը,

գ) ներկայացնել հաղորդումներ, որոնք նպաստում են խտրական կարծրատիպերի հաղթահարմանը՝ հիմնված ազգային, ռասայական, կրոնական և սեռային հատկանիշների վրա,

դ) ապահովել այնպիսի հաղորդումների պատրաստում և հեռարձակում, որոնք միտված են իրավագիտակցության, սոցիալական պատասխանատվության և մեդիագրագիտության բարձրացմանը, ինչպես նաև բնակչությանը տեղեկատվություն են տրամադրում հասարակական-քաղաքական և միջազգային իրադարձությունների մասին, ինչպես նաև աջակցում են աղետների կառավարման և նվազեցման գործընթացներին ՀՀ-ում,

ե) ազգային փոքրամասնությունների մասին հաղորդումների հեռարձակումն ապահովելու նպատակով՝ ոչ գիշերային ժամերին հանրային տեսալսողական հեռարձակողները պետք է տրամադրի շաբաթական նվազագույնը 30 րոպե:[3]

«Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի համաձայն՝ Հանրային հեռուստաընկերության համար լիազոր մարմինը Հանրային հեռարձակողի խորհուրդն է[4]: Իսկ Հանրային հեռուստաընկերության ընթացիկ գործունեությունը ղեկավարվում է գործադիր տնօրենի ու նրա տեղակալների միջոցով[5]: Հեռուստաընկերության ֆինանսավորումը իրականացվում է ՀՀ պետական բյուջեից[6]:

Հանրային հեռարձակողի խորհուրդը, ի թիվս այլ իրավասությունների, ստացված բողոքների հիման վրա կամ իր նախաձեռնությամբ ուսումնասիրում է լրագրողների մասնագիտական վարքագծի կանոնների խախտման դեպքերը և ընդունում է խորհրդատվական բնույթի եզրակացություն[7]: Այս մեխանիզմը գործադրվել է 2023 թվականից և կիրառվում է առ այսօր[8]:

2. ՀՀ օրենքը Տեսալսողական մեդիայի մասին, Հոդված 22, https://www.arlis.am/hy/acts/145079:
3. Տե՛ս նույն տեղում:
4. Տե՛ս նույն տեղում, Հոդված 27:
5. Տե՛ս նույն տեղում, Հոդված 28:
6. Տե՛ս նույն տեղում, Հոդված 29:
7. Տե՛ս նույն տեղում, Հոդված 27:
8. Տե՛ս Հանրային հեռարձակողի խորհրդի կայք, «Ինքնակարգավորում և էթիկա» բաժնում: https://www.tvradiocouncil.am/hy/informations/inqnakargavorum-ev-etika:

«Հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ն գործում է «Առաջին ալիք», «Առաջինի լրատվական», «Առաջինի միջազգային ալիք» և «Առաջին ալիք Ամերիկա» տեսալսողական ծրագրերով: Այս զեկույցում անդրադարձ է կատարվում «Առաջին ալիք» և «Առաջինի լրատվական» ծրագրերին, որոնք ներկայացվում են որպես «Հանրային հեռուստաընկերություն» կամ «Հանրային»:

Հանրայինի արձագանքը տարբեր տարիների հասարակական, քաղաքական կարևոր իրադարձություններին, պատերազմներին, երկրաշարժին, անկախության գործընթացներին և այլ արդիական խնդիրներին ձևավորել է վստահության որոշակի հիմք: Այս մասին են վկայում նաև ԿԲ տվյալները, ըստ որի՝ Առաջին ալիքն ինչպես 2021 թ.-ին, այնպես էլ 2024 թ.-ին Հայաստանում քաղաքական իրադարձությունների մասին տեղեկատվություն ստանալու ամենավստահելի հեռուստաալիքն է: Միևնույն ժամանակ, կարևոր է նկատել, որ ինչպես առհասարակ հեռուստաալիքների, այնպես էլ Առաջին ալիքի նկատմամբ վստահությունը ԿԲ վերջին երկու ուսումնասիրությունների տվյալներով նվազել է:

Գծապատկեր 2. Հեռուստաալիքների նկատմամբ վստահությունը քաղաքական իրադարձությունների մասին տեղեկատվություն ստանալու համար:

Ո՞ր հեռուստաալիքին եք ամենից շատ վստահում Հայաստանում քաղ. իրադարձությունների մասին տեղեկ. ստանալու համար, եթե այդպիսին կա:



Այսպիսով, Հանրային հեռարձակման հիմնական առաքելությունը սահմանված է ինչպես ՀՀ օրենքներով, այնպես էլ միջազգային մեդիա ստանդարտներով, ներառում է անաչառ, բազմակողմանի և հանրությանը միավորող բովանդակության ստեղծում՝ առանց սեռային, տարիքային, սոցիալական, մշակութային և ազգային տարբերակման: Այս հետազոտությունն իր էությամբ արձագանք է այդ առաքելությանը. այն նպատակ ունի հասկանալու, թե, ըստ լսարանի պատկերացումների, որքանով է հեռուստաընկերությունը իրականացնում լսարանի ակնկալիքներն ու դժգոհությունները հասցեագրելու իր մանդատը:

Այս համատեքստում ՀՌԿԿ-Հայաստան հիմնադրամի կողմից իրականացված հետազոտությունը խորքային պատկերացում է տալիս հեռուստադիտողների նախասիրությունների, ընկալումների և ակնկալիքների մասին՝ հաշվի առնելով հեռուստաընկերության որդեգրած առաքելությունը, ստանձնած պարտավորություններն ու դրանց համապատասխանությունը հանրության շրջանում ձևավորված կարծիքներին: Արդյունքում՝ այս հետազոտությունը կարող է առանցքային քայլերից մեկը լինել՝ Հանրայինի բովանդակությունը հանրային սպասումներին համահունչ, արդյունավետ, ներառական և ժամանակակից կերպով բարելավելու ուղղությամբ:

Հետազոտության շրջանակները

Նպատակը

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել Հանրային հեռուստաընկերության (Առաջին ալիք և Առաջին լրատվական ալիք) լսարանի ընկալումները, բովանդակության նախասիրություններն ու ակնկալիքները և նոր լսարանի ներգրավման հեռանկարները:

Խնդիրները

Հետազոտության գործընթացն ուղենշող խնդիրները հետևյալն են.

1. Պարզել լսարանի գոհունակությունը Հանրային հեռուստաընկերության բովանդակության, ինչպես նաև՝ ժանրերի, թեմաների, ձևաչափերի, հեռուստադեմքերի և ցուցադրման ժամերի վերաբերյալ:
2. Պարզել Հանրային հեռուստաընկերության դիտողների ընդհանուր հատկանիշներն ու նախընտրությունները:
3. Պարզել Հանրային հեռուստաընկեության բովանդակությունը չնախընտրողների ընդհանուր հատկանիշներն ու խուսափման խթանները:

Մեթոդաբանական մոտեցում

Տվյալների հավաքագրման համար ընտրվել է որակական մեթոդաբանական մոտեցում, որը հնարավորություն է տվել խորությամբ և մանրամասնությամբ հասկանալ լսարանի վերաբերմունքը, բովանդակության նախասիրություններն ու ակնկալիքները: Որակական մոտեցման ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ այն ապահովում է թեմայի խորքային ուսումնասիրություն և հնարավորություն տալիս բացահայտել ոչ միայն փաստերը, այլև դրանց ներքո գտնվող պատճառները, մոտիվացիաներն ու մեկնաբանումները: Վերլուծության փուլում կիրառվել է թեմատիկ կոդավորման և վերլուծության ռազմավարություն՝ թույլ տալով համակարգված ձևով խմբավորել, համեմատել և մեկնաբանել տարբեր խմբերից ստացված տվյալները:

Տվյալների հավաքագրման մեթոդ

Որպես տվյալների հավաքագրման մեթոդ ընտրվել է դեմառդեմ ֆոկուս խմբային քննարկումը (այսուհետ՝ ՖԽՔ)՝ հնարավորություն տալով ներգրավել հնարավորինս թիրախային ընտրված մասնակիցներ, որոնք ներկայացնում են հանրության բազմազան շերտերը: Այս մեթոդը կիրառվել է նպատակաուղղված ընտրանքի սկզբունքով և հնարավորություն տվել համադրելու հնարավորինս մեծ թվով և տարբեր սոցիալ-ժողովրդագրական խմբեր ներկայացնող անձանց կարծիքներն ու ընկալումները, ապա վերջիններս փոխկապակցելու միջոցով ստանալ ամբողջական պատկերացում լսարանի վերաբերմունքի ու ակնկալիքների մասին:

Տվյալների հավաքագրման գործիք

Տվյալների հավաքագրման համար կիրառվել է կիսաձևայնացված ուղեցույց, որը ներառել է նախապես մշակված հիմնական և մասնավորեցնող հարցերի շրջանակ *(Տե՛ս Հավելված 1)*: Այս ուղեցույցը, միաժամանակ պահպանելով կառուցվածքային տրամաբանությունը, հնարավորություն է տվել հետազոտողներին քննարկումների ընթացքում ճկունորեն փոփոխել հարցերի հաջորդականությունը, շրջանցել ոչ վերաբերելի հարցերը կամ ավելացնել նոր հարցեր՝ ելնելով քննարկման ընթացքից:

Ուղեցույցի հարցերի շրջանակը նախապես քննարկվել և համաձայնեցվել են պատվիրատու կողմի հետ՝ ապահովելու համար հետազոտության նպատակներին և սպասումներին համահունչ տվյալների հավաքագրումը:

Ընտրանքը

Ընդհանուր առմամբ՝ իրականացվել է 26 ՖԽՔ, որոնցից 6-ը՝ Երևանում, իսկ 20-ը՝ Հայաստանի 10 մարզում: Յուրաքանչյուր մարզում իրականացվել է երկուական քննարկում՝ մեկը մարզկենտրոնի բնակիչների հետ, մյուսը՝ գյուղական բնակավայրերի բնակիչների հետ: Ընդհանուր առմամբ՝ ՖԽՔ-ներին մասնակցել է 246 մարդ[9]:

ՖԽՔ-ների մասնակիցների ընտրության սկզբունքը

ՖԽՔ-ների մասնակիցների ընտրությունը կազմակերպվել է հնարավորին չափ բազմազան ներկայացվածություն ապահովելու սկզբունքով: Այս նպատակով մասնակիցների ընտրության ընթացքում հաշվի են առնվել սեռը, տարիքային խումբը և կրթության մակարդակը՝ հասարակության տարբեր շերտերի ընդգրկվածությունը երաշխավորելու համար:

Մարզերում, ի տարբերություն Երևանի, մասնակիցների ընտրության սկզբունքում հիմնական չափանիշ է դրվել բնակավայրի տեսակը (գյուղ, մարզկենտրոն)՝ ապահովելու համար ներկայացվածություն թե՛ գյուղական, թե՛ քաղաքային բնակավայրերից:

Երևանում, քանի որ ընտրանքում ՖԽՔ-ների թիվը համեմատաբար մեծ էր (6 ՖԽՔ), նկատի է առնվել քաղաքի ներսում տարածքային բազմազանության ապահովումը՝ ընդգրկելով տարբեր վարչական շրջաններում բնակվող անձանց:

Մասնակիցների ընտրության հարցում կիրառվել են բացառման սկզբունքներ: ՖԽՔ-ներին չեն հրավիրվել անձինք, ովքեր համապատասխանել են հետևյալ չափանիշներից առնվազն մեկին.

- գովազդային, շուկայական հետազոտությունների, տեսալսողական մեդիայի, լսողական մեդիայի, տպագիր մամուլի, մեդիաբովանդակության արտադրական գործունեություն ծավալող անհատ ձեռնարկատերերի կամ իրավաբանական անձանց աշխատողներ կամ ծառայություն մատուցողներ,
- միևնույն անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի աշխատողներ,
- նույն ընտանիքի անդամներ:

Տվյալների որակի ապահովում

Որպես որակի ապահովման հիմնական գործիքներ են ծառայել տեսաձայնագրությունները, որոնք ապահովել են հավաքագրված տեղեկատվության ամբողջական պահպանումն ու իրականացված հարցազրույցների որակը: Դրանք թույլ են տվել վերահսկել մոդերատորի աշխատանքը, տվյալների որակը, ինչպես նաև ընտրանքի չափանիշներին համապատասխանությունը: Վերջին բաղադրիչի վերահսկումն իրականացվել է նաև ՖԽՔ-ների մեկնարկից առաջ և ընթացքում ՀՌԿԿ թիմի կողմից դաշտային աշխատանքների համակարգողի, հավաքագրողների ու օգնականների միջև մշտական կապ ապահովելու և գործընթացն անմիջականորեն վերահսկելու միջոցով:

9. Այս վերլուծությունն արտահայտում է միայն ընտրված մարդկանց կարծիքը, այն ներկայացուցչական չէ և չի կարող տարածվել ողջ բնակչության կարծիքի վրա:

Էթիկական նկատառումներ

Պայմանագրով սահմանված պարտավորության համաձայն՝ ՖԽՔ-ները տեսաձայնագրվել են, սղագրվել և տրամադրվել պատվիրատու կողմին: Սակայն, ՀՌԿԿ-Հայաստանն առաջնորդվելով «Մի վնասիր» սկզբունքով, որը կազմակերպության քաղաքականության հիմնաքարերից է, մասնակիցներին նախապես տեղեկացրել է այդ մասին և ստացել նրանց գրավոր ու բանավոր համաձայնությունը: Բանավոր համաձայնությունն ստացվել է հավաքագրման փուլում, իսկ գրավորը (ստորագրությամբ)՝ ՖԽՔ-ների մեկնարկից անմիջապես առաջ՝ մասնակիցներին տրամադրելով համաձայնության թերթիկներ *(Տե՛ս Հավելված 3)*:

Բացի այդ՝ ՀՌԿԿ-Հայաստանի թիմակիցները ՖԽՔ-ների արդյունքներից հեռացրել են մասնակիցների անձը նույնականացնող բոլոր տվյալները: Սղագրությունները պատվիրատուին տրամադրվել են անանունացված կերպով, իսկ տեսաձայնագրություններում խամրեցվել են մասնակիցների դեմքերը:

ՀՌԿԿ-Հայաստանի թիմը տեսաձայնագրություններն ու սղագրությունները պահպանել է իր ապահով սերվերում, որին հասանելիությունը խստորեն կարգավորվում է կազմակերպության ներքին կանոնակարգերով:

Սահմանափակումներ

Հետազոտության հիմնական սահմանափակումները բխել են պայմանագրային պահանջներով ենթադրվող վերահսկողական գործիքակազմի պարտադիր և անփոփոխ կիրարկումից: Այս հանգամանքը խոչընդոտներ է առաջացրել մի քանի ուղղություններով (տե՛ս ստորև)՝ սահմանափակելով հետազոտության ճկունությունը և առաջադրելով որոշ նկատառումներ, որոնք պետք է հաշվի առնել արդյունքները մեկնաբանելիս:

1. *Հավաքագրման բարդություններ.* տեսաձայնագրման պայմանագրային պահանջը սահմանափակել է պոտենցիալ մասնակիցների ներգրավման հնարավորությունները, քանի որ շատերն են այս պատճառով հրաժարվել մասնակցել քննարկմանը (հատկապես՝ տղամարդիկ): Արդյունքում՝ թիմն ստիպված է եղել դաշտային աշխատանքների համար նախատեսվածից ավելի շատ ժամանակ և ռեսուրսներ հատկացնել՝ երկարաձգելով տվյալների հավաքագրման ամբողջ գործընթացը:

2. *Կողմնակալության (bias) հավանականություն՝ հավաքագրվող կարծիքներում.* տեսաձայնագրվելու հանգամանքը որոշակի հավանականությամբ ազդել է արտահայտված կարծիքների անաչառության վրա՝ սահմանափակելով հավասարակշռված և անկաշկանդ կարծիքների հավաքագրման պայմանները. հետազոտական թիմը նկատել է, որ մասնակիցները երբեմն արտահայտված ագրեսիվ, իսկ երբեմն՝ առանձնակի կաշկանդված և զգուշավոր են արտահայտվել կամ էլ արել են սոցիալապես ցանկալի (socially desirable) դիտարկումներ:

3. *Պատվիրատուի ներկայությունը որոշ ՖԽՔ-ներին.* կարծիքների հավաքագրման կողմնակալության տեսակետից ևս մեկ սահմանափակող գործոն է եղել պատվիրատուի ներկայացուցչի կողմից որոշ ՖԽՔ-ների ազատ ունկնդրումը: ՀՌԿԿ-Հայաստանը, իր պայմանագրային պարտավորություններից ելնելով, ապահովել է Հանրային հեռարձակողի խորհրդի կամ Հանրային հեռուստաընկերության մեկ ներկայացուցչի մասնակցությունը յուրաքանչյուր ՖԽՔ-ին, արդյունքում՝ իրականացված 26 ՖԽՔ-ից 7-ին ներկա է եղել պատվիրատուի կողմից մեկական ներկայացուցիչ: Հետազոտական թիմը նկատել է, որ այս հանգամանքը որոշակիորեն կաշկանդել է մասնակիցներին, իսկ երբեմն՝ առաջացրել ավելի սուր և զգայուն արձագանքներ:

Այնուամենայնիվ, նշված սահմանափակումները մեղմելու և դրանց ազդեցությունը հնարավորինս չեզոքացնելու նպատակով ՀՌԿԿ-Հայաստանի մասնագետ-մոդերատորները կիրառել են քննարկումը վարելու համապատասխան տեխնիկաներ՝ փոխվստահություն ստեղծելու, ինչպես նաև

քննարկումներն արդյունավետ և բովանդակալից անցկացնելու համար: Բացի այդ՝ մոդերատորների, օգնականների և վերլուծական թիմի միջև անցկացվել են պարբերական քննարկումներ (դեբրիֆինգներ), որոնք բովանդակային նրբերանգները ճշգրտելուց զատ՝ հնարավորինս ճշգրտել են կողմնակալ դիտարկումների ու արձագանքների մեկնաբանման նկատմամբ թիմի վերլուծական ռազմավարությունը:

Սահմանափակում է արձանագրվել նաև ՖԽՔ-ների մասնակիցների հավաքագրման գործընթացում: Թեև ՀՌԿԿ-Հայաստանի թիմին հաջողվել է մասնակիցների շրջանում ապահովել տարիքային խմբերի և կրթական մակարդակների առումով համաչափ ներկայացվածություն, սակայն կանանց ներգրավվածությունը որոշակիորեն գերազանցել է տղամարդկանց թվին (4:1 հարաբերակցությամբ): Սա հիմնականում պայմանավորված է եղել տղամարդկանց շրջանում թեմայի նկատմամբ հետաքրքրության պակասով և նման ձևաչափերում արտահայտվելու դժկամությամբ:

Չնայած տղամարդկանց թվի համեմատական պակասին՝ նրանցից ստացված տեղեկատվությունը բավարարել է նյութի հագեցվածություն (սատուրացիա) ստանալուն, ուստի վերլուծության արդյունքների վրա այն էական ազդեցություն չի ունեցել:

Բաժին 2.

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Այս բաժնում ներկայացված են ՖԽՔ-ների ընթացքում հավաքագրված տեղեկատվության հիմնական արդյունքները: Անդրադարձ է կատարվում Հանրայինի հասարակական դերին և իմիջին, դիտման մոտիվացիաներին և չդիտելու պատճառներին[10]:

2.1. Հանրայինի հասարակական դերը և կերպարը (իմիջը)

Ինչպես քննարկել ենք առաջին գլխում՝ վերջին տարիներին իրականացված մի շարք հետազոտություններ վկայում են, որ վերջին տասնամյակում հեռուստատեսության դերը որպես տեղեկատվություն ստանալու և ժամանցի հիմնական միջոց, ընդհանուր առմամբ, նվազել է: Այս միտումը հաստատվում է նաև ՖԽՔ-ների տվյալների վերլուծությամբ: Մատնանշվող հիմնական պատճառներն են թվային այլ հարթակների առկայությունը և ժամանակի սղությունն ու զբաղվածությունը, որոնք չեն նպաստում հեռուստատեսություն դիտելուն՝ նախապես սահմանված, կոնկրետ ժամերին: Փոխարենը, թվային սարքերի և համացանցի միջոցով մարդիկ կարողանում են դիտել իրենց հետաքրքրող բովանդակությունը և ձևաչափերը՝ իրենց առավել հարմար ժամերին և արագությամբ՝ ընտրելով կոնկրետ հատվածներ և առավել նախընտրելի ձևաչափեր, ինպես նաև խուսափել գովազդներից:

Հավաքագրված տվյալները ցույց են տալիս, որ հեռուստատեսությունը կարող է պահպանել իր արդիականությունը, եթե հարմարվի թվային տեխնոլոգիաների տարածմամբ ձևավորվող պահանջներին: Սա հաստատվում է նաև ՖԽՔ-ներում արձանագրված բազմաթիվ դեպքերով, երբ մասնակիցները նշել են, որ չեն դիտում Հանրայինը, սակայն պարզվել է, որ նրանք հետևում են Հանրայինի բովանդակությանը թվային այլ հարթակներում և հաճախ նույնիսկ տեղյակ չեն, որ դիտած հաղորդումները հեռարձակվում են հենց Հանրայինով: Լսարանը բարձր է գնահատում կարճաժամկետ, կրթական, հետաքրքրաշարժ հաղորդումները, որոնք հասցեագրված են տարբեր խմբերին:

Հանրայինի մասին լսարանի ընկալումները կարելի է խմբավորել երեք հիմնական դերի շուրջ՝ վստահելի տեղեկատվության աղբյուր, ընտանեկան ժամանցի հարթակ և մշակութային ավանդույթների խորհրդանիշ: Այս ընկալումները, սակայն, ուղեկցվում են քննադատություններով, որոնք ցույց են տալիս բարելավման անհրաժեշտությունը:

10. Բաժնի ենթավերնագրերը ձևակերպվել են հաշվի առնելով հետազոտության խնդիրները և ստացված տեղեկատվության նախնական բովանդակության ուսումնասիրությունը:

Հանրայինը՝ որպես վստահելի տեղեկատվության աղբյուր. Հանրայինը դիտվում է որպես համեմատաբար վստահելի աղբյուր, հատկապես քաղաքական և հասարակական լուրերի համար: Լսարանը հաճախ «վավերացնում» է այլ աղբյուրներից ստացված տեղեկատվությունը Հանրայինի լրատվական թողարկումների միջոցով: Այն ընկալվում է որպես ավելի անաչառ՝ համեմատած մասնավոր ալիքների հետ, քանի որ չունի կոնկրետ սեփականատերերի հետ կապեր: Այնուամենայնիվ, քննադատություն է հնչում իշխանամետ կողմնակալության, քարոզչական գործիք լինելու համար, մասնավորապես՝ ընդդիմադիր տեսակետների սահմանափակ ներկայացման և ընտրողական լուսաբանման համար: Այն քննադատվում է նաև լուրերի ոչ օպերատիվ ներկայացման համար: Որոշ մասնակիցներ նշում են, որ ալիքը երբեմն ներկայացնում է «իդեալական» Հայաստան՝ կտրված իրականությունից: Տարածված է նաև այն ընկալումը, որ Ալիքը երևանակենտրոն է, քանի որ բավարար ուշադրություն չի դարձնում մարզային հիմնախնդիրներին, ձեռքբերումներին ու առօրյային: Իշխանության ազդեցության նշույլներ լսարանը տեսնում է ոչ միայն տեղեկատվական ու քաղաքական, այլև մշակութային, ժամանցային հաղորդումների բովանդակության և հեռուստադեմքերի ընտրության մեջ:

> *«Առանց քաղաքական կողմնորոշումներ ունեցող... Այսինքն՝ ինչ-որ մի կուսակցության շահեր չի ներկայացնում... Ինքը պաշտոնական Հայաստանին վերաբերվող, ամբողջ մասշտաբային [է], ու իրա գովազդներն էլ շատ չափի մեջ են, էդ եմ ես պատկերացնում»:*
>
> ***Գյուղաբնակ մասնակից***

> *«Եթե համեմատության կարգով կարելի ա ասել՝ մոտ քսան տարի առաջվա հայլուրի խմբագրությունում պատին ցուցակ կար կպցրած, այն անձանց ցուցակն էր, որ արգելվում էր, եթե նույնիսկ կադրում երևային: Ես համոզված եմ, որ էդ նույնը հիմա էլ կա՝ ավելի խիստ, և էդ ցուցակը երևի ավելի մեծ է: Կարելի է ինդիկատոր համարել, եթե ընդդիմություն կոչվածից որևէ մեկը Հ1-ում երևա, ուրեմն շատ լավ դերասանական խաղ ա գնում: Էն անձինք, ովքեր իրապես վտանգ են ներկայացնում իշխանությանը կամ կարող են ընդդիմություն հանդիսանալ, հաստատ չեն երևա էդ եթերում, որը հանրային հեռուստաընկերության ձեռագիրն ա տարիներ շարունակ: Հանրային հեռուստաընկերությունը հանրային ա, որովհետև հանրային միջոցներով կառավարվող հեռուստաընկերություն ա, բայց միշտ եղել ա իշխանության գործիքը: Ազդեցությունը հատկապես մեծ ա ավագ սերնդի վրա, որովհետև շատերը համացանցից ու հեռախոսի հնարավորություններից չեն կարողանում օգտվել, կամ գլուխ չեն դնում կամ իրանց համար ավանդույթ ա՝ Հ1-ը ինչ ասեց: Եվ էդ ազդեցությունը ավելի շատ մեծ է գյուղաբնակ շրջաններում և ավագ սերնդի շրջանում, որտեղ հեռուստատեսությունը ազդեցություն ունի, և էդ ազդեցությունը պետք է ճիշտ օգտագործել ազգային գաղափարախոսության տարածման վրա, բայց լրիվ հակառակն է...»:*
>
> ***Քաղաքաբնակ մասնակից***

> *«...Հիմա ինչպես ամբողջ քաղաքականությունն ա կենտրոնացած Երևանի վրա, նույն ձև էլ հանրային հեռուստատեսությունը. մարզային ոչ մի պրոբլեմ կամ ինչ-որ հաջողություն ոչ մի հաղորդման մեջ չես նկատի՝ բացի փախած լրահոսով ինչ-որ բաներ...Մարզերում ինչ ա կատարվում, ինչ չի կատարվում, ոչ մեկի գործը չի: Ոչ մի ալիք չի ցուցադրում, բայց հանրայինը պարտավոր ա մարզերի վրա մեծ ուշադրություն դարձնի...»:*
>
> ***Քաղաքաբնակ մասնակից***

Հանրայինը՝ որպես ժամանցի միջոց. Առաջին ալիքն իր տեղեկատվական դերակատարումից զատ դիտարկվում է նաև որպես ընտանեկան ժամանցի միջոց, որը միավորում է տարբեր սերունդների՝ հայկական ֆիլմերի, սպորտային մրցաշարերի, մրցութային նախագծերի և ինտելեկտուալ ծրագրերի միջոցով: Երիտասարդները պատրաստակամություն են հայտնում դիտելու գրավիչ բովանդակություն, օրինակ՝ գրական ստեղծագործությունների հիման վրա նկարահանված այնպիսի սերիալներ, ինչպիսիք են «Քաոս»-ը կամ «Վերջին ուսուցիչը»: Այս դիտարկումները վկայում են, որ եթե պարզվեն երիտասարդների հետաքրքրություններն ու նախասիրությունները և առաջարկվեն դրանց համապատասխան նախագծեր, կարող է հնարավոր լինել նրանց ներգրավել հեռուստատեսային լսարանի շրջանակում:

> *««Երկու աստղն» էր, և սիրով ենք նայել՝ ամբողջ..., բոլորս միասին՝ ընտանիքով: Ընտանիքում մի քանի սերունդներ են, էդ երևի միակ հաղորդումն էր, որ միավորեց մեզ էդ պահին»:*
>
> ***Քաղաքաբնակ մասնակից***

> *«Ինձ մոտ հեռուստատեսությունը էսպես է. թերթելու սկզբունքով. որտեղ որ հայացքս կտրեց մի հետաքրքիր բան, էդտեղ էլ կանգ եմ առնում ու նայում եմ, բայց եղել են դեպքեր, որ, օրինակ, հեռուստատեսությունը ստիպել է մեզ նայել, օրինակ, «Հանրային»-ը ունեցել է լավ սերիալներ, էդ «Քաոս»-ը, «Պատվի համար» և այլն, որ սպասում էի էդ օրվա ժամը գար, որ ես հատուկ միացնեմ հեռուստաալիքը ու նայեմ հերթով էդ սերիալները: Այսինքն, եղել ա, որ հեռուստատեսությունը ինքը պարտադրել է, որ մենք մտնենք ու նայենք էդ ալիքը»:*
>
> ***Երևանաբնակ մասնակից***

Հանրայինը՝ որպես ավանդույթ. Առաջին ալիքի նկատմամբ լսարանն ունի հատուկ վերաբերմունք. այն ընկալում է որպես «մեր ալիք», որով պայմանավորված առավել սրտացավ է և պահանջատեր: Առաջին ալիքը հաճախ ընկալվում է որպես պրոֆեսիոնալ և իր առաքելությանը համապատասխան և որակի տեսակետից կայուն հեռուստաալիք: Դիտողների շրջանում այն ասոցացվում է ավանդույթի և վստահելիության հետ՝ որպես «իրական հեռուստատեսություն»: Դիտողները դրականորեն են գնահատում հաղորդումների լրջությունը, հաղորդավարների և դերասանների կրթվածությունն ու մասնագիտական փորձառությունը: Առաջին ալիքը դիտարկվում է նաև որպես ազգային արժեքների և մշակույթի պահպանման գործիք: Մասնակիցները բարձր են գնահատում այն հաղորդումները, որոնք նպաստում են ազգային ինքնության, մշակութային ժառանգության և պետականության պահպանմանը: Բայցևայնպես, հնչում է քննադատություն այն մասին, որ որպես հանրային ալիք՝ «Առաջինը» միշտ չէ, որ լիարժեք կատարում է իր վերոնշյալ առաքելությունը[11]:

Բովանդակության որակի առումով ևս տարբերություն կա. Առաջին ալիքի սերիալներն ու ֆիլմերը հաճախ դիտարկվում են որպես ավելի բովանդակալից և որակյալ՝ ի տարբերություն այլ ալիքների, որոնք առաջարկում են «կրկնվող», «ցածրարժեք» սերիալներ, թեև, ըստ մասնակիցների արձագանքի՝ դիտելիություն ունեն: Բովանդակային հայեցակետերից զատ, դրական արձագանքներ են գրանցվել նաև հաղորդումների տեսողական և ձայնային որակի վերաբերյալ. տեխնիկական ցուցանիշների բարձր մակարդակը (տեսախցիկի շարժ, ձայնագրման լսելիություն) լսարանի համար դիտումը դարձնում է առավել գրավիչ:

11. Ավելի մանրամասն տե՛ս ենթագլուխներ 2.3.1 և 2.3.2:

> *«Հանրային հեռուստաընկերությունից եթե հանենք էդ քաղաքական հաղորդաշարը, ես դրական նայում եմ, դրական վերաբերվում եմ, բայց կարծում եմ մենք բոլորս պիտի անենք ամեն ինչ, պիտի լինենք աջակից, էդ հեռուստաընկերությունը որ զարգանա, ավելի լավ որակ ցույց տա, որովհետև Հայաստանից դուրս նաև ինքը կարծիք ա մեր բոլորի մասին հայտնում: Ես իրան ընդունում եմ որպես մերը: Չգիտեմ, ինչ-որ հոգեհարազատություն էդ ալիքի հետ կապված ունեմ»:*
>
> ***Քաղաքաբնակ մասնակից***

> *«Եթե ես ժամանակ էլ գտնեմ հեռուստացույց նայելու, շատ քիչ եմ նայում հաղորդումները, ես անպայման կնայեմ Հանրայինը, անհամեմատ, եթե զուգահեռներ եմ անցկացնում այլ հեռուստաալիքների հետ, էլի գոնե հարմար եմ գտնում դա, մենակ թե որ մեր հաղորդավարները շատ գեղեցիկ են խոսում, խոսքը լավն է, քան մյուս ալիքների... եթե զուգահեռ անցկացնում եմ այլ ալիքների հետ, ես նախընտրում եմ սա՝ և խոսքը, և հասանելիությունը»:*
>
> ***Երևանաբնակ մասնակից***

Այսպիսով, չնայած հեռուստատեսության նկատմամբ հետաքրքրության համընդհանուր նվազման միտումներին՝ Հանրային հեռուտաընկերությունը, լսարանի ընկալմամբ, շարունակում է պահպանել իր կարևորությունը՝ հատկապես որպես որոշակի վստահության ռեսուրս ունեցող տեղեկատվության աղբյուր, ազգային արժեքների ու մշակույթի փոխանցման հարթակ, ինչպես նաև ընտանեկան ժամանցի միջոց: Այն դիտարկվում է որպես բովանդակության որակի որոշակի կայունություն ունեցող, պրոֆեսիոնալ հեռուստաալիք, որն իր ներուժով դեռևս կարողանում է սպասարկել հանրության համեմատաբար տարբեր խմբերի տեղեկատվական և ժամանցային կարիքները:

2.2. Հանրայինի դիտման մոտիվացիաները, դիտողների ընդհանուր հատկանիշները և չդիտելու պատճառները

Ենթագլուխը ներկայացնում է Առաջին ալիքի և Առաջին լրատվական ալիքի դիտման և չդիտման հիմնական պատճառները՝ հիմնվելով լսարանի տարբեր խմբերի ընկալումների, դիտման դրդապատճառների, մեդիա սպառման վարքագծի և բովանդակային նախընտրությունների վրա:

2.2.1. Առաջին ալիքի դիտման մոտիվացիաները և դիտողների ընդհանուր հատկանիշները

Առաջին ալիքը դիտելու հիմնական շարժառիթներն են վստահելի և հասանելի տեղեկատվության տրամադրումը, հաղորդումների ուսուցողական բնույթը, հաղորդավարների գրագետ խոսքը և պաշտոնական, վստահություն ներշնչող կեցվածքը: Լսարանը բարձր է գնահատում բովանդակության մշակութային և ազգային ուղղվածությունը, ինչպես նաև ներառականության դրսևորումները, օրինակ՝ ժեստերի լեզվի կիրառումը, որը հնարավորություն է տալիս հաշմանդամություն ունեցող անձանց ևս օգտվել բովանդակությունից: Ալիքը դիտվում է հատկապես արտակարգ իրավիճակներում (օրինակ՝ պատերազմ, բնական աղետներ), երբ կարիք է զգացվում ստուգված և պաշտոնական աղբյուրից տեղեկատվություն ստանալու: Լուրերի և քաղաքական հաղորդումների առումով Առաջին ալիքը դիտվում է որպես վստահելի և պատասխանատու հարթակ, որը նաև ներկայացնում է Հայաստանը միջազգային հարթակում:

> *«Ինձ՝ վստահություն, որ ավելի ճիշտ ու հստակ ինֆորմացիա եմ ստանում, քան ինչ-որ անձի պատկանող հեռուստաընկերությունից»:*
>
> **Գյուղաբնակ մասնակից**

> *«Էդ հաղորդավարի կեցվածքը, արտաքին տեսքը, հագուստը, ասենք սանրվածքը, բանը ընդեղ ոնց որ ավելի ես մի քիչ տենում եմ, որ պաշտոնական... ոչ նենց ազատ ոճի էլի...»:*
>
> **Գյուղաբնակ մասնակից**

Հանրայինի հաղորդումների գրեթե բոլոր ժանրերը՝ լուրերից մինչև ժամանցային ծրագրեր, դիտվում են ընտանեկան ֆիլտրով, հատկապես ծնողների կողմից, որոնք կարևորում են հաղորդումների անվտանգ լեզուն և բովանդակությունը երեխաների համար: Մասնակիցները գնահատում են, որ հաղորդումները չեն պարունակում ցենզուրայից դուրս տարրեր և ունեն որոշակի մշակութային ճաշակ: Ինտելեկտուալ, ճանաչողական և հուզական ներգործություն ունեցող հաղորդումներն («Սպասիր ինձ», «Թույլ օղակ» և այլն) առանձնապես սիրված են տարբեր տարիքային խմբերի կողմից: Առաջին ալիքի ֆիլմերն ու սերիալները նույնպես դիտվում են՝ արժևորվելով իրենց որակով և մշակութային համատեքստով:

> *«Լեզվի տեսանկյունից՝ դե, գրագետ են խոսում, մեզ հաճելի է գրագետ խոսքը...՝ ոչ բարբառային, ժարգոնային կամ ինչ-որ... Իրենք լավ են խոսում»:*
>
> **Երևանաբնակ մասնակից**

> *«Ավելի շատ, տեսեք, օրինակ ունենք դեռահասների համար ֆիլմեր, օրինակ՝ «Չորս երազանքը», իմ աղջիկը ինը տարեկան ա, ու մեծ հաճույքով նայում ա: Այսինքն ես կարողանում եմ հանգիստ ասել՝ դիր հեռախոսը, ու առաջարկելու բան ունեմ, կառաջարկեմ ֆիլմը, որը ինքը նայում ա, բայց նախադպրոցական տարիքի երեխաների համար չունենք առաջարկելու ոչինչ...»:*
>
> **Երևանաբնակ մասնակից**

Սպորտային հաղորդումների ուղիղ հեռարձակումները, ինչպես նաև ամանորյա և հատուկ միջոցառումների ներկայացումը ևս լսարանի դիտելու շարժառիթներից են: Դիտման դրդապատճառներից է նաև հաղորդումների ամբողջությամբ հայերենով ներկայացումը, ինչը խթանում է լեզվամշակութային ինքնության պահպանումը: Որոշ մասնակիցներ նաև շեշտում են գովազդների համեմատաբար փոքր թիվը և դրանց բովանդակության հարաբերականորեն բարձր որակը, որը հնարավորինս քիչ է խոչընդոտում դիտելիս:

> *«Հավաքվում, նայում ենք կարևոր խաղերը, որը չենք կարողանում, երկրից դուրս ա, հավաքվում ենք էդ խաղերը նայում ենք քաղաքի մեջ: Հիմնականում Հ1-ով են ցույց տալիս հավաքականի խաղերը»:*
>
> **Գյուղաբնակ մասնակից**

Դիտողների ընդհանուր հատկանիշները

Հավաքագրված տվյալները ցույց են տալիս, որ Առաջին ալիքի լսարանը հիմնականում կազմում են իգական սեռի ներկայացուցիչները և ավագ սերունդը: Սա պայմանավորված է և՛ բովանդակության ուղղվածությամբ, և՛ այդ խմբերի կողմից համացանցի և թվային սարքերի պասիվ օգտագործմամբ: Ավագ սերնդի ներկայացուցիչներն առավելապես միտված են հետևել լրատվական և քաղաքական հաղորդումներին, իսկ միջին տարիքի անձինք՝ կրթական, մշակութային և ժամանցային ծրագրերին: Չնայած տարածված կարծիքին, թե հեռուստատեսությունը հետաքրքիր չէ երիտասարդների համար՝ ՖԽՔ-ների տվյալները ցույց են տալիս, որ որոշ հաղորդումներ դիտվում են նաև երիտասարդների կողմից, հիմնականում՝ ուսանողների և մանկահասակ ու պատանի երեխաներ ունեցող մայրերի: Սակայն այս խմբի ներկայացուցիչները հեռուստաբովանդակությանը հիմնականում ծանոթանում են ոչ համաժամանակյա ձևաչափով՝ դիտելով հաղորդումների կրկնությունները կամ տեսաձայնագրությունները սոցիալական ցանցերում կամ այլ առցանց հարթակներում:

> *«Ես «Դիմակահանդես»-ը պարտադիր նայել եմ, բայց YouTube-ով»:*
>
> ***Երևանաբնակ մասնակից***

Մասնակիցները նկատում են, որ երեխաները և պատանիները գրեթե չեն դիտում Առաջին ալիքը: Սա պայմանավորված է ինչպես տեխնոլոգիական մատչելիությամբ, այնպես էլ հեռուստատեսությամբ այդ լսարանին համապատասխան որակյալ բովանդակության պակասով: Ծնողները համոզված են, որ համապատասխան ծրագրերի և արդյունավետ ժամային գրաֆիկի առկայության դեպքում իրենք պատրաստ են երեխաների հետ դիտել հաղորդումները և խթանել հեռուստատեսության դիտման մշակույթը: Այս համատեքստում հատկապես կարևորվում է ընտանեկան համախմբումը՝ առանձնապես երեկոյան ժամերին և հանգստյան օրերին ցուցադրվող հաղորդումների միջոցով: Բացի ընդհանուր լսարանից՝ ՖԽՔ-ներում ընդգրկված մասնագիտական համայնքի որոշ ներկայացուցիչներ՝ հիմնականում կրթության և մշակույթի ոլորտներից, ակտիվորեն հետևում են Առաջին ալիքի բովանդակությանը՝ որոշ նյութեր օգտագործելով իրենց մասնագիտական գործունեության շրջանակում:

> *«Որովհետև նայում են, եթե հետաքրքիր մատուցված ա լինում, նույն, էդ ֆանտաստիկ, գիտաֆանտաստիկ, հետաքրքիր ինֆորմացիաները հաստատապես նայում են: Էն ժամանակ կարծիք կար, որ ասում էին «Էս մեր մեծերի մասին տեղեկատվությունները, Չարենց, Անդրանիկ և այլն, երեխեքի համար հետաքրքիր չի, էլ չեն կարդում, չեն լսում», ես ձեզ ասեմ, շատ էլ լավ լսում են: Մի աղջիկ կա, էլի բլոգեր՝ «Անի Արցախ»-ը, ամեն անգամ մի կտոր ա քաղում, գնում ա օրինակ էդ մարդու արձանի մոտ, ասում, ու երեխեքը տեսնում ես, որ իրանց հետևորդ են դարձել, լսում են, լավ էլ նայում են, այսինքն էդ բաները, որ հետաքրքիր ու ճիշտ մատուցվի, օրինակ դերային խաղերով...»:*
>
> ***Երևանաբնակ մասնակից***

> *«...Ծնողավարման [Ծնողական ժողով հաղորդման մասին է խոսքը] հետ կապված թեմաներ լինում են, որ հաճելի ա, կարելի ա, եղել ա, որ նույնիսկ ընդգրկել եմ ծնողական ժողովի ժամանակ»:*
>
> ***Քաղաքաբնակ մասնակից***

2.2.2. Հանրայինը չդիտելու հիմնական պատճառները

Այս բաժնում ներկայացվում է Հանրայինը չդիտելու հիմնական պատճառները: Այն քննարկում է մեդիա սպառման սովորույթների փոփոխությունները, ընկալվող քաղաքական կողմնակալությունը, բովանդակության սահմանափակ բազմազանությունը, երիտասարդների և երեխաների համար ծրագրերի պակասը, ինչպես նաև այլ գործոններ, որոնք ազդում են Հանրայինի գրավչության վրա:

Առաջին ալիքը չդիտելու պատճառները

Առաջին ալիքը չդիտելու հիմնական պատճառները լսարանի տարբեր խմբերի շրջանում պայմանավորված են մի շարք փոխկապակցված գործոններով, որոնք ներկայացված են ստորև.

Մեդիա սպառման վարքագծի փոփոխություն. տեխնոլոգիական առաջընթացով, ժամանակի սղությամբ ու առօրյայի ծանրաբեռնվածությամբ պայմանավորված՝ հեռուստադիտողների զգալի մասը հեռացել է ավանդական հեռուստատեսությունից՝ նախապատվություն տալով ինտերնետային հարթակներին, սոցիալական ցանցերին և բազմազան ձևաչափերով վիդեոհարթակներին, որոնք առաջարկում են ավելի արագ, ճկուն և անհատականացված բովանդակության մատուցում:

> *«Առաջ շատ-շատ էի դիտում հեռուստացույց, բայց հիմա պակասել ա, որովհետև համացանցի դերն ու նշանակությունը այնքան ա բարձրացել, որ մեր առօրյայի մասն ա դարձել, կարելի ա ասել թթվածնի նման համացանից ենք օգտվում, նենց, ոնց որ առավոտյան կնախաճաշենք կամ կճաշենք կամ երեկոյան կընթրենք, նույն կարևորությամբ կամ ավելի հաճախ համացանցից ենք օգտվում»:*
>
> ***Քաղաքաբնակ մասնակից***

Քաղաքական կողմնակալություն և վստահության պակաս. հաճախ լսարանն Առաջին ալիքն ընկալում է որպես իշխանամետ և լիարժեք անկախություն չունեցող հարթակ, որը գերակշռաբար ներկայացնում է պետական խոսույթն ու իշխանական տեսակետները՝ սահմանափակելով բազմակարծության և քննադատական մտածողության ձևավորման հնարավորությունները: Այս ընկալումն առավել խորացել է 44-օրյա պատերազմի լուսաբանման համատեքստում, երբ լսարանն զգացել է տեղեկատվության թերի կամ կողմնակալ մատուցում:

> *«Կոնկրետ պատերազմի ժամանակ հեռուստացույցը՝ կարճ, կոնկրետ... Բազմաթիվ անգամ սկեսրայրիս հետ խնդիրներ ենք ունեցել. ես լուրն ասել եմ համացանցից, սկեսրայրս՝ տենց բան չկա, Հ1-ով չեն տալիս, ես էլ՝ դե, պա՛պ, Էստեղ քցել են, ճիշտ ա, Էլի՛, ու 2-3 օր հետո նոր նույն բանը հեռուստացույցը կասեր, սկեսրայրս կասեր՝ փաստորեն, ճիշտ էր: Այդտեղ ա հիասթափությունը առաջանում: Հիմա, որ ինչ-որ հարց ա լինում, ասում ա՝ հլը նայի, Էնտեղ կա՞, կամ՝ սենց բան են ասել Հ1-ով, հլը նայի՝ ավելի մանրամասն ինչ են ասում»:*
>
> ***Գյուղաբնակ մասնակից***

Բովանդակության սահմանափակում և հետաքրքրության պակաս. լսարանի համոզմամբ՝ Առաջին ալիքի հաղորդումների մի մասն համահունչ չէ ժամանակակից պահանջներին և չի հասցեագրում բոլոր խմբերի կարիքները: Դրանք բնութագրվում են կրկնվող բովանդակությամբ, այլ հեռուստաընկերություններից (խոսքը այլ երկրների՝ հիմնականում ռուսական հեռուստաալիքներով հեռարձակվող տարբեր ձևաչափերի մասին է: Օրինակ «Թույլ օղակը», որը համարում են "Слабое звено" հաղորդման վերարտադրությունը) վերցված նյութերի վերարտադրությամբ, արդիականութ-

յան պակասով, ինչպես նաև թեմատիկ ու ժանրային միակողմանիությամբ: Բացի այդ՝ նշվում է, որ հաղորդումները բավարար չափով չեն ներառում հասարակության բոլոր շերտերի հետաքրքրությունները: Հատկապես երիտասարդները նախընտրում են ինտերնետային հարթակները՝ շեշտելով Առաջին ալիքի ձևաչափերի հնացած լինելը և նորարար գաղափարների պակասը:

> *«Հետո հեռուստաներկայացում են ցույց տալիս, ամեն անգամ նույն «պահանջվում է ստախոս»: Կամ, ուրիշ չունեն, ամեն կիրակի դե կա, թատրոն են ցույց տալիս, ինքը նույնը: Եթե հիմա ֆուտբոլ նայելու լինենք, ուրիշ ալիքով ցույց տան, հաստատ Ռուսաստանի ալիքով կնայենք, որովհետև մեկնաբանները նույնն են: Մի քասթինգ չեն անցկացնի, մի երիտասարդի բերեն, ասեն սովորենք, կամ մի մրցույթ անցկացնեն, մտնեն, ինչ տարբերություն երգիչների քասթինգ անցկացնեն, կամ մեկնաբանների, կարելի ա աշխատել»:*
>
> ***Քաղաքաբնակ մասնակից***

Երեխաների և երիտասարդների համար բովանդակության պակաս. լսարանը շեշտում է, որ Ալիքը բավարար ուշադրություն չի դարձնում մանկական, պատանեկան և կրթական բովանդակության ապահովմանը: Այս բացը հատկապես մտահոգիչ է ծնողների պարագայում, ովքեր իրենց երեխաների համար հետաքրքիր և արժեքային բովանդակություն ապահովելու համար ստիպված են դիմել այլընտրանքային հարթակների, որոնք հաճախ պակաս վերահսկելի և, հետևաբար, պակաս վստահելի են: Սրան հակառակ «Առաջին ալիքի» բովանդակությունը վստահելի է ծնողների համար և նրանք անգամ առանց վերահսկողության թույլ են տալիս իրենց երեխաներին դիտել:

> *«Խոսեցինք պատմական սերիալների ու կարճամետրաժ հոլովակների մասին, ես կուզեի չմոռանանք նաև մեր փոքրիկ ընկերներին՝ մանկապատանեկան, մանկական ծրագրերը չկան, ընդհանրապես չկան:*
>
> ***Երևանաբնակ մասնակից***

Ազգային մշակույթի և արժեքների անբավարար ներկայացում. չնայած Առաջին ալիքի մշակութային առաքելությանը՝ դիտարկումներ կան այն մասին, որ Ալիքը բավարար չափով չի ներկայացնում ազգային գաղափարախոսությունը, մշակութային ժառանգությունը, ավանդական երաժշտությունը և տեղական կինոարտադրանքը:

> *«Իսկ ես կուզեի Էնպիսի մի հաղորդում լինի, որ Էդ մեր հայությունը, հայեցիությունը, պետությունը պահպանվի, հետագայում էլ՝ եթե ունենանք արխիվներ, մեր երեխաներին ասենք... Որովհետև հիմնականում դպրոցահասակ երեխաները չգիտեն պատմությունը: Թեկուզ, չգիտեմ, ինչ-որ ֆորմատով հաղորդում լինի, որ ամեն պատմամշակութային վայրերի մասին հատուկ նկարագրվի, որ պահվի Էդ»:*
>
> ***Երևանաբնակ մասնակից***

Ծայրամասերի անտեսում. ծայրամասերի նկատմամբ անտեսումն արտահայտվում է հատկապես մարզաբնակների կարծիքներում: Նրանք շեշտում են, որ Առաջին ալիքը երևանակենտրոն է և հազվադեպ է անդրադառնում մարզերում տեղի ունեցող խնդիրներին, հաջողություններին ու առօրյային: Այս պատճառով մարզերում ապրող մարդիկ հաճախ չեն ինքնանույնանում հեռուստատեսային բովանդակության հետ:

> *«Ասենք մարդ իր շաբաթն ու կիրակին էս քաղաքի ասֆալտից հեռու անի ու էդ շատ հանրային ա, այ էդ վախտ ես կնայեմ: Էդ վախտ ինձ կհետաքրքրի, թե չէ ես սաղ վախտ քաղաքի էս ծերից էն ծերը, երևի էդ հեռուստացույցը նույն կենտրոնն ա, Երևանն ա, Երևանի անցուդարձն ա, որ սաղ օրը տենում ենք»:*
>
> ***Քաղաքաբնակ մասնակից***

Հեռուստադեմքերի վերաբերյալ դժգոհություններ. հեռուստադիտողների շրջանում արձանագրվել են բողոքներ հաղորդավարների վարքագծի և հարցադրումների ոճի վերաբերյալ, որոնք որակվել են «ագրեսիվ», «կողմնակալ» կամ «ոչ պրոֆեսիոնալ» բնութագրիչներով: Բացի այդ՝ հնչել են նաև կարծիքներ, ըստ որոնց՝ որոշ արժանի հեռուստադեմքեր դուրս են մնացել Հանրայինի եթերից՝ ընդդիմադիր քաղաքական հայացքների պատճառով:

Ժամային անհարմար գրաֆիկ. քննադատության է ենթարկվել որոշ հաղորդումների՝ հատկապես տեղեկատվական և վերլուծական ծրագրերի ուշ ժամերին ցուցադրությունը, ինչը սահմանափակում է դրանց դիտման հնարավորությունները հատկապես տարեց կամ աշխատող լսարանների համար: Հավելյալ նշվել է, որ հետաքրքրություն ներկայացնող մի շարք հաղորդումներ հաճախ ցուցադրվում են աշխատանքային ժամերին՝ սահմանափակելով դրանց հասանելիությունը:

Գովազդի ավելցուկ և ոչ տեղին տեղաբաշխում. լսարանը բարձրաձայնել է գովազդների հաճախակիության մասին՝ չնայած այն բանին, որ Առաջին ալիքը ֆինանսավորվում է հանրային միջոցներով: Վերջինս հատկապես քննադատության է ենթարկվել ոչ ժամանցային կամ լուրջ հաղորդումների ժամանակ ցուցադրության պատճառով: Լսարանը սա դիտարկել է որպես կոմերցիոն մոտեցում, որը հակասում է Ալիքի հանրային առաքելությանը:

> *«Հասկանալով նաև, որ հեռուստատեսությունը գովազդների վրա ա ապրում պետք է ուղղակի խնդրեմ պատմական ֆիլմ կլինի կարևոր, շատ կարևոր հաղորդում կլինի, մեկ էլ դը-դըխկ... գովազդ է ցույց տալիս՝ պեպսի, կոլա, շինանյութ, նորից պեպսի, կոլա, շինանյութ, նորից»:*
>
> ***Երևանաբնակ մասնակից***

Առաջին լրատվական ալիքը չդիտելու պատճառները

Մասնակիցների շրջանում «Առաջին լրատվական ալիքի» ճանաչելիությունը զգալիորեն ցածր է՝ համեմատած «Առաջին ալիքի» հետ: Շատերը պարզապես տեղյակ չեն դրա գոյության մասին, որոշները նշում են, որ միայն լսել կամ պատահմամբ հանդիպել են, սակայն չեն դիտում, իսկ փոքրամասնություն կազմող տեղեկացվածները նշում են, որ չեն դիտում, քանի որ այն հիմնականում կրկնում է Առաջին ալիքի նույն տեղեկատվական բովանդակությունը: Ըստ էության, լուրերին հետևելու համար հիմնականում դիտում են երեկոյան ժամերին հենց Առաջին ալիքով հեռարձակվող գլխավոր թողարկումը: Բացի այդ՝ լսարանի շրջանում միտում կա առօրյա ծանրաբեռնվածության պայմաններում խուսափել տարբեր ալիքներով և ձևաչափերով ներկայացվող մեծածավալ լրատվական և քաղաքական բովանդակությունից՝ նախապատվություն տալով ավելի թեթև, կրթական և ժամանցային ծրագրերին:

Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ Առաջին լրատվական ալիքին հետևող համեմատաբար փոքրաթիվ լսարանը հիմնականում նախընտրում է հետևել թողարկվող բովանդակությանը սոցիալական ցանցերի, այլ ոչ հեռուստատեսության միջոցով:

2.3. Առաջին ալիքի բովանդակության վերաբերյալ արձագանքներն ու ակնկալիքները

Այս գլխում ներկայացվում են լսարանի արձագանքները Առաջին ալիքի բովանդակությանը ՝ անդրադառնալով տեղեկատվական, կրթական ու ժամանցային նյութերի ընկալմանը, ակնկալվող նոր ձևաչափերին և հեռուստադեմքերի հանդեպ ձևավորված վերաբերմունքին:

2.3.1. Առաջին ալիքի բովանդակության վերաբերյալ արձագանքները

Առաջին ալիքի բովանդակությունն, ի տարբերություն այլ հեռուստաալիքների, գնահատվել է համեմատաբար վստահելի, որակյալ և անաչառ: Միևնույն ժամանակ, դրա համապատասխանությունը լսարանի կարիքներին և ակնկալիքներին գնահատվել է ոչ բավարար: Փաստորեն, ըստ հավաքագրված նյութի՝ տարբեր սոցիալական խմբեր և հետաքրքրություններ ներկայացնող լսարանի շրջանում Առաջին ալիքը լիարժեք չի ապահովում հավասարակշռված առաջարկ՝ տեղեկատվական, կրթական, ժամանցային և սպորտային-առողջապահական բովանդակության առումներով:

Ստորև անդրադարձ է կատարվում բովանդակության տեսակներին և դրանց վերաբերյալ լսարանի գնահատականին:

Տեղեկատվական բովանդակություն. տեղեկատվական բովանդակության նկատմամբ վերաբերմունքը երկակի է: Ավագ սերնդի լսարանը շարունակում է հետևել լուրերին՝ ընդգծելով դրանց կարևորությունը: Դիտելիությունը և տեղեկատվության նկատմամբ վստահությունը նկատելի է հատկապես մարզերի բնակիչների արձագանքներում: Սակայն, նկատելի է նաև դժգոհություն՝ ուշացած, ոչ ամբողջական կամ միակողմանի տեղեկատվության տրամադրման վերաբերյալ: Տեղեկատվության նկատմամբ վստահությունն ավելի ցածր է երիտասարդների շրջանում. նրանք հաճախ նախընտրում են տեղեկատվություն ստանալ առցանց՝ սոցիալական մեդիայի այլընտրանքային հարթակներից, քանի որ դրանք ավելի բազմակողմանի են, օպերատիվ և հակիրճ:

> *«Ինձ թվում ա՝ իշխանությունը ինչ եղավ, էդ գծով են իրանք գնում: Օրինակ, հեղափոխության օրերին դու ինտերնետով տեսնում էիր՝ ինչ է կատարվում հանրապետությունում, բայց Հ1-ը ոչ մի բան չէր խոսում: Բայց էն ժամանակ Սերժ Սարգսյանի տեսակետն էր, հիմա էլ, որ էս իշխանությունը եկել է, տալիս են էն, որ ժողովուրդը լսի իրենց կողմից, քննադատական վերաբերմունք որ չես լսի, այլ տեղերից ավելի շատ ինֆորմացիա ես ստանում»:*
>
> ***Քաղաքաբնակ մասնակից***

Կրթադաստիարակչական և մշակութային բովանդակություն. ՖԽՔ-ների ընթացքում առավել հաճախ բարձրաձայնվել է կրթադաստիարակչական բովանդակության անհրաժեշտության խնդիրը: Հիշատակվել են նախկինում հեռարձակված «բարձրորակ» ուսուցողական հաղորդումներ, որոնց կարևորությունն ընդգծվել է հատկապես մանկահասակ և դպրոցահասակ երեխաների համար: Լսարանն Առաջին ալիքի առաքելության կարևոր մասն է համարում կրթադաստիարակչական գործառույթները, որը վերջին տարիներին կամ բացակայում է եթերում, կամ էլ չի բավարարում իր որակով և երեխաներին ներգրավվելու հետաքրքրությամբ: Իսկ առկա ծրագրերից որոշները ցուցադրվում են ոչ հարմար ժամերին, երբ երեխաները գտնվում են կրթական հաստատություններում: Փոքրաթիվ մասնակիցներ նշել են Առաջին ալիքի եթերում ցուցադրվող կամ վերջերս ցուցադրված որոշ հաղորդումներ, որոնք սիրված են եղել իրենց և իրենց երեխաների կողմից, մասնավորապես՝ «Արկածների հետքերով», «Փորձերոն», «Չորս երազանք» նախագծերը: Լսարանի կողմից շատ է հիշատակվել նաև հայ գրողների ստեղծագործությունների հիման վրա նկարահանված բազմասերիանոց ֆիլմերը, որոնցից հատկապես առանձնացվել են «Վերջին ուսուցիչը» և «Քաոսը»՝ ընդգծելով դրանց կրթական նշանակությունը:

> *«Մեր գրադարանում՝ «Վերջին ուսուցիչ»-ը... գրքերը արդեն վերջերս Էնքան ենք դուրս տվել: «Վերջին ուսուցիչ»-ը, անընդհատ, այսինքն՝ տվեց հեռուստաընկերությունը, ինքը ուսուցողական, և՛ գիրքը, և՛ ֆիլմը, դաստիարակում է՝ ուսուցիչը ոնց է շփվում աշակերտների հետ, ինչքան մտերիմ, շփվում են դաստիարակչական: Ու տվեց հրահանգը, կոպիտ ասած, հեռուստատեսությունը, երեխեն եկավ գրադարան, մտավ գրադարան, էդ միջավայրում հայտնվեց: Չէ՞ որ դա միջավայր է, մշակութային օջախ ա, որտեղ ոտք դնելուց ինչ-որ չափով էլի երեխան զարգանում ա, իրա ներաշխարհը, իր ամեն ինչը»:*
>
> ***Երևանաբնակ մասնակից***

> *«Շատ-շատ կուզեի հետ դառնար «Հայ ասպետը», որը որ դպրոցներում... Այն դպրոցում, որը որ մասնակցում էր, տոն էր՝ թե՛ ուսուցիչների համար, թե՛ աշակերտների համար: Էդ մեր պատրաստվելը, էդ ամեն ինչը, մենք ինքներս էլ էինք շատ բան իմանում, երեխաներն էլ: Ու շատ-շատ կուզեմ, երևի միակ բանը, որ հետ դառնա, էդ ա»:*
>
> ***Քաղաքաբնակ մասնակից***

Ժամանցային բովանդակություն. չնայած Առաջին ալիքի դերի և առաքելության մասին լսարանի վերը նշված պատկերացումներին և ակնկալիքներին՝ ՖԽՔ արդյունքները ցույց են տալիս, որ ժամանցային բովանդակությունն ամենաշատ դիտումներն ունի: Հատկապես սիրված են երաժշտական, մրցութային նախագծերը, թարգմանված և տեղական արտադրության ֆիլմերը (նաև խորհրդային շրջանի հայկական ֆիլմերը) և սերիալները, ինչպես նաև սոցիալական ուղղվածություն ունեցող հաղորդումները:

> *«Հ1-ը ունի ծրագրեր, օրինակ, «Երգ երգոց»-ը, որը տարբերվում ա բոլոր տեսակի երաժշտական հաղորդումներից, ներկայացնում ա մեր հինը, ճաշակով և որակով երաժշտություն՝ մեր ժողովրդականը, որպեսզի...Մի քիչ առանց այն էլ ոնց որ մոռացության ա գնում էդ ամենը, ինձ շատ ցավալի ա»:*
>
> ***Քաղաքաբնակ մասնակից***

Ուշադրության է արժանի այն փաստը, որ վերը հիշատակված բովանդակության նախագծերը դիտարկվում են որպես ընտանեկան ժամանցի միջոցներ՝ կատարելով ընտանիքի տարբեր սեռի, տարիքի և հետաքրքրություն ունեցող անդամներին միավորելու գործառույթ: Մնացած դեպքերում հեռուստացույց դիտում են հիմնականում երեխաները (մուլտֆիլմեր) և ընտանիքի ավագ սերնդի անդամները (լրատվական հաղորդումներ և սերիալներ): Այնումենայնիվ, դրանք ևս լիովին չեն բավարարում լսարանի պահանջներին. հատվածային բնույթ ունեն կամ հեռարձակվում են միայն հատուկ առիթներին:

Սպորտային և առողջապահական բովանդակություն. սպորտային հաղորդումներն առանձնանում են որպես պահանջված բովանդակություն՝ առանձնակիորեն տղամարդկանց լսարանի հետաքրքրությունը հասցեագրելու տեսակետից: Հատուկ կարևորվում է հայ մարզիկների մասնակցությամբ մրցաշարերի ցուցադրությունը: Մեծ դիտելիություն ունեն ֆուտբոլի նշանավոր առաջնությունները (ինչպես ազգային հավաքականների, այնպես էլ ակումբների մասնակցությամբ), որոնք ակնկալվում, սակայն չեն հեռարձակվում Առաջին ալիքով:

Լսարանը Առաջին ալիքի եթերում կարևորում է նաև առողջապահական և առողջ ապրելակերպը խթանող հաղորդումների առկայությունը՝ դրանք դիտարկելով որպես հանրային իրազեկվածության բարձրացման գործիք:

2.3.2. Ակնկալվող բովանդակության ձևաչափերը, ժանրերը և թեմատիկ ուղղությունները

Հանրայինի նկատմամբ լսարանի ակնկալիքները տարբերվում են այլ հեռուստաալիքների նկատմամբ ակնկալիքներից: Լսարանը դիտարկում է այն ոչ միայն որպես լրատվամիջոց, այլ նաև որպես հանրային սեփականություն և պետական արժեք՝ դրանով իսկ բարձրաձայնելով որակյալ, բազմազան և հանրօգուտ բովանդակության պահանջը: Լսարանի ակնկալիքները խմբավորվել է ըստ ստորև բերված հիմնական բովանդակային ուղղությունների.

Տեղեկատվական և քաղաքական բովանդակություն. լսարանը Հանրայինից ակնկալում է օպերատիվ, անաչառ և բազմակողմանի լրատվություն, ինչպես նաև խորացված, վերլուծական և հստակ կառուցված քաղաքական թեմաներով հեռուստածրագրեր: Հատուկ կարևորվում է, որ քաղաքական հաղորդումները չպաշտպանեն որևէ կողմի շահերը և օբյեկտիվորեն արտացոլեն երկրում տիրող իրական իրավիճակը: Ակնկալվում է առանձին տեղեկատվական հաղորդում, որը կանդրադառնա պետության առաջնահերթ խնդիրների ընթացքին՝ վեր հանելով դրանց լուծման եղանակները և բարեփոխումների ընթացքը: Շեշտադրվում է, որ նման բովանդակությունը պետք է մատչելի լինի լայն լսարանի համար (բոլորի համար պարզ ու հասկանալի լեզվով ներկայացվի):

> *«Բանն ա շատ թույլ, էդ ռեալ քաղաքական վերլուծություններ, բաներ, իրանք շատ կողմնակալ են ու ամեն մեկը ինչ որ մեկի թելն ա ուզում թելի: Քաղաքական վերլուծությունները պետք է լինեն շատ անաչառ, ռեալ, օբյեկտիվ, որը պակասում ա, դրա համար չգիտեմ երևի զարգանալու տեղ ունենք, սենց ասեմ...»:*
>
> ***Քաղաքաբնակ մասնակից***

Կարևորվում է նաև հաղորդումների հեռարձակման ժամանակացույցի համապատասխանությունը թիրախային լսարանին: Օրինակ, քաղաքական քննարկումների՝ ուշ ժամերին ցուցադրությունը խնդիր է ավագ սերնդի և աշխատող մարդկանց համար:

Կրթադաստիարակչական բովանդակություն. ՖԽՔ-ների ընթացքում ամենից հաճախ հնչած պահանջը կրթական բովանդակության պակասն է: Քանի որ Հանրայինի առաքելության մեջ կարևորվում է նոր սերնդի կրթությունն ու դաստիարակությունը, ակնկալվում է մանկական լսարանի համար ստեղծել նոր որակյալ մուլտֆիլմեր կամ ժամանակակից մոտեցումներով վերամշակել և ցուցադրել արդեն գոյություն ունեցողները՝ ապահովելով դրանց առավոտյան ցուցադրությունը՝ նախադպրոցական տարիքի երեխաների առօրյային համահունչ ժամերին:

> *«Կուզեի հայկական նոր մուլտֆիլմեր նկարահանվեր և ցուցադրվեր մեր երեխաների համար, քանի որ մենք որակապես ոչ մի լավ հայկական մուլտֆիլմեր չունենք»:*
>
> ***Քաղաքաբնակ մասնակից***

Պատանիների համար ակնկալվում են նորարարական, ինտերակտիվ հաղորդումներ, որտեղ նրանք կներգրավվեն որպես համաստեղծողներ:

Կարևորվում են նաև ուսուցչի դերը բարձրացնող նախագծերը, ուսուցողական ֆիլմերը: Օրինակ է բերվում «Վերջին ուսուցիչը» ֆիլմը, որը խթանել է ընթերցանությունը և վերաիմաստավորել ուսուցիչ-աշակերտ հարաբերությունները: Այս առումով, կրթության ոլորտում աշխատող մասնակիցներն առաջարկում են սերտ համագործակցություն դպրոցների հետ, որի միջոցով կկարողանան հասկանալ լսարանի կարիքները և արդյունավետորեն հասցեագրել դրանք:

> *«...Համագործակցեք թեկուզ դպրոցների հետ, Էնքան կարևոր է: Օրինակ, ուղարկեք էդ հաղորդումների լինքերը, կամ մենք էլ ասենք երեխեքը ինչն են հետաքրքրությամբ նայում, օրինակ Թեքեյանի մասին ինչը կլինի, որ իրանք հետաքրքրությամբ նայեն ու էդ համագործակցության արդյունքում դուք ստեղծեք ... ֆիլմը, մենք էլ կտանք, պրոպագանդա կանենք դպրոցներում, կհամեմենք, ծրագրից էլ հեռու չենք ընկնի»:*
>
> ***Երևանաբնակ մասնակից***

Ընդհանուր առմամբ՝ ակնկալվում է, որ բովանդակությունը կխթանի գիտության նկատմամբ հետաքրքրությունը, կնպաստի հայրենասիրական դաստիարակությանը: Առաջարկվում է համագործակցություն երիտասարդների շրջանում սիրված ինֆլյուենսերների հետ՝ ստեղծելով համատեղ հաղորդումներ, որոնք կներկայացնեն հայ պատմությունը, գրականությունը, մարզային կյանքը:

> *«Այ, Կարոյական ինչ-որ մի բան մտածել, գնալ բացահայտել, բայց դա անել ավելի գեղեցիկ, ավելի մտածված, ավելի արժեքային: Օրինակ, Կարոն գնում ա ենթադրենք ինչ-որ քարանձավ, էդ քարանձավի մասին ինֆորմացիա ա տալիս ու ասում ա «տեսեք, Էստեղ չորս հարյուր տարի չգիտեմինչ չի եղել»: Էդ նույն բանը կարելի ա մտածել, բերել հեռուստատեսություն, բայց անել շատ ավելի բարձրաճաշակ»:*
>
> ***Երևանաբնակ մասնակից***

<u>Մշակութային և ազգապահպան բովանդակություն.</u> լսարանը մեծ կարևորություն է տալիս հայկական մշակույթի պահպանմանը և հանրահռչակմանը՝ ակնկալելով այս ուղղությամբ շարունակական, հստակ մշակված և ժամանակակից ձևաչափերով ներկայացվող նախագծեր: Առանձնահատուկ ուշադրություն է պահանջվում մշակույթի «մաքրության» պահպանման հարցում՝ խուսափելով անհարկի արդիականացումից:

> *«Իմ կարծիքով, առաջին խնդիրը պիտի լինի ազգային արժեքների պահպանությունը, բայց դա չենք տեսնում: Եթե չեմ սխալվում, կարող ա մի տարի առաջ էր, կամ երկու, սուպեր Սաքոն Կոմիտաս էր ծաղրել: Կարող ա հյուրի գիտակցականը էդքան ա, բայց դա կարելի էր չհեռարձակել, ու ամենամեծ հիասթափությունս դրանից է եղել... Հարյուր հոգի պիտի նայի, ես չեմ պատկերացնում իրենց աշխատանքները ինչպես են ընթանում, բայց դա չպիտի հեռարձակվեր»:*
>
> ***Քաղաքաբնակ մասնակից***

> *«Օրինակ, իմ երեխեն շատ հաճույքով նայում ա ենթադրենք «Դիմակահանդես»-ը, նույն հանրայինի: Էլի, բաներ կա, որ շատ դեմ եմ, օրինակ, էն տարազով, էն տղան որ ելույթ ունեցավ, էդ օրվանից արգելեցի նայել, դուրս ընդհանրապես չեկավ: Բայց ուզում եմ ասեմ, ինչ որ անում եք, ինչ-որ հաղորդում, մտածենք մեր երեխուն ինչ արժեք ենք դրանով փոխանցելու, որովհետև վաղն էլ ինքն ա գալու նստի մեր տեղը, օրինակ, հանրային հեռուստատեսության տնօրեն ա դառնալու մեր երեխեքից մեկը ու ինքն ա արժեք տվող դառնալու...»:*
>
> ***Երևանաբնակ մասնակից***

Առանձնացվում է մարզային կյանքի ներկայացման անհրաժեշտությունը, ինչպես նաև ժարգոնի փոխարեն գրական հայերենի կիրառումը եթերում: Շատ մասնակիցներ ընդգծում են Առաջին ալիքի դերը լեզվամշակույթի արժեքների պահպանման հարցում և առաջարկում են իրականացնել լեզվական հաղորդաշարեր՝ գրական խոսքի տարածման նպատակով: Հատկապես բարձր են գնահատվել հայկական հին ֆիլմերի ցուցադրությունը, ինչպես նաև հայ գրողների ստեղծագործությունների հիման վրա նկարահանված մի քանի մասանոց ֆիլմերի կարևորությունը, որոնցում պահպանված է լեզուն և կիրթ խոսքը:

Ժամանցային բովանդակություն. չնայած ժամանցային բովանդակության նկատմամբ ակնկալիքներն ավելի սահմանափակ են՝ այնուամենայնիվ, լսարանը կարևորում է դրա որակական կողմը և ընտանեկան ժամանցի հնարավորությունները: Արժևորում են հեռարձակված որակյալ նախագծերը, օրինակ՝ «Երկու աստղը», «Դիմակահանդեսը»: Առաջարկներ են հնչում նոր մրցութային նախագծերի իրականացման մասին՝ երիտասարդ տաղանդների, երգիչների ներգրավմամբ:

Ակնկալվում է նոր բազմասերիանոց հայկական ֆիլմերի ստեղծում և որակյալ արտասահմանյան սերիալների ու ֆիլմերի կրկնօրինակում:

Սոցիալական համերաշխություն խթանող բովանդակություն. այս ուղղության ծրագրերը բարձր գնահատականի են արժանանում՝ հատկապես նրանց միավորող և հուզական շփում ապահովող բնույթի պատճառով: Հատուկ շեշտադրվել է «Սպասիր ինձ» հաղորդման նշանակությունն ու պահանջվածությունը: Առաջարկվում է նմանատիպ նշանակության նոր նախագծերի իրականացում, որոնք կբարձրացնեն հանրային համերաշխությունը, կնպաստեն համայնքային միասնությանը և սոցիալական կապերի ամրապնդմանը:

> *«Հանրային հեռուստաընկերության հենց արթնանում ա ժամը 7-ից էդ ալիքն ա, միակ հեռուստաալիքն ա, որ հավանում ա, որ ասեմ տենց համեմատական մյուս ալիքների ինքը տենց ավելի մակարդակով ալիք ա: Սիրով նայում ենք "Жди меня"-ն [«Սպասիր ինձ»] հայերեն տարբերակով, որ միշտ սենց սրտատրոփ դրան սպասում ենք»:*
>
> ***Քաղաքաբնակ մասնակից***

Պրոֆեսիոնալիզմի և որակի բարձրացման ակնկալիքներ. անկախ թեմատիկ ուղղություններից՝ հաճախ շեշտադրվել է անձնակազմի պրոֆեսիոնալիզմի բարձրացման անհրաժեշտությունը: Լսարանը պահանջում է, որ Հանրայինում ներգրավված լինեն բարձրակարգ մասնագետներ, որոնց համար սահմանված կլինի մրցունակ վարձատրություն, որը համարժեք կլինի նրանց մասնագիտական որակավորման պահանջին՝ նվազեցնելով այլ հեռուստաընկերություններ տեղափոխվելու հավանականությունը: Լսարանը կարծում է, որ Առաջին ալիքը պետք է լինի օրինակելի՝ իր բովանդակությամբ, որակով և հաղորդումների պատրաստման մշակույթով, ինչը կստիպի մյուս ալիքներին վերանայել իրենց մոտեցումները: Այս ակնկալիքներն ընդգծում են Հանրայինի նկատմամբ ունեցած առանձնահատուկ վստահությունը և պահանջատիրական մոտեցումը՝ միաժամանակ մատնանշելով կոնկրետ ուղղություններ, որտեղ բարելավման անհրաժեշտություն կա՝ լսարանի հետաքրքրությունները բավարարելու և նրա դերակատարությունը հանրային կյանքում ամրապնդելու համար:

2.3.3. Հեռուստադեմքերի մասին վերաբերմունքն ու պատկերացումները

Հանրայինի լսարանի պատկերացումներում հեռուստադեմքը ոչ միայն հաղորդավար է, մեկնաբան, լրագրող, երգիչ, դերասան, այլ նաև արժեք փոխանցող կերպար: Լսարանն ակնկալում է հեռուստադեմքերից կիրթ և գրագետ խոսք, վստահություն ներշնչող պահվածք՝ ներառյալ արտաքին տեսք, և հարգալից վերաբերմունք հանդիսատեսի նկատմամբ: Լսարանը նախընտրում է հեռուստադեմքեր, ովքեր իրենց արտաքինով, խոսքով, վարքագծով և հաղորդավարական ոճով ներշնչում են հարգանք և վստահություն և լսարանի հետ իրական ու անկեղծ կապ ստեղծելու կարողություն: Միաժամանակ, լսարանի կողմից քննադատական գնահատական են ստացել այն հեռուստադեմքերը, որոնք ընկալվել են որպես կողմնակալ, չափազանց ցուցադրական, անբնական կամ խոսքի ու վարքագծի տեսակետից մասնագիտական չափանիշներին չհամապատասխանող:

Այսպիսով, վերը ներկայացված դրական կամ բացասական բնութագրիչներով է պայմանավորված, թե լսարանն ում է, ընդհանուր առմամբ, ընդունում եթերում, իսկ ում՝ ոչ: Այս առումով հնչել են նաև մարդկանց անուններ, որոնք երբևէ չեն համագործակցել Հանրայինի հետ կամ չեն համագործակցում այս պահին:

Թեև լսարանը դրական է գնահատում որոշ հեռուստադեմքերի աշխատանքը, միաժամանակ որոշ մասնակիցներ նշում են, որ նրանց ներգրավումը բազմաբնույթ և կտրուկ տարբերվող ծրագրերում խոչընդոտում է հեռուստադեմքի՝ կոնկրետ հաղորդման և դրա ուղերձի հետ ասոցացվելուն: Ըստ արձագանքների՝ սա թուլացնում է հեռուստադեմքի, հաղորդման և Հանրային հեռուստաընկերության միջև կապի ձևավորումը և շեղում նյութի բովանդակությունից:

> *«Ես հոգնում եմ ամենօրյա դեմքերից, որովհետև ինքը թարմություն չի տալիս ինձ: Նույն մարդուն տեսնում ես էս ծրագրում, էն ծրագրում, էն ծրագրում, ինքը երգում ա, ինքը հաղորդավար ա, չգիտեմ: Ինձ պակասում ա մարդ, ում ուղղակի կուզենամ լսել, որից ես էդ ինֆորմացիան կստանամ, ոչ թե ուզենամ տեսնել, որովհետև ինքը հայտնի է: ...Չի կարելի լինել ամենուրեք. դերասա՞ն ես, դերասան մնա, որովհետև ես ուզում եմ քեզ բեմում տեսնել, ֆիլմում տեսնել: Բայց երբ դու դառնում ես հաղորդավար, հետո դառնում ես երգիչ, հետո դառնում ես չգիտեմ ինչ գովազդող, ես չգիտեմ քեզ որ բանի հետ ասոցացնեմ, դա ինձ խանգարում ա»:*
>
> ***Երևանաբնակ մասնակից***

Այսպիսով, Հանրային հեռուստաընկերության լսարանը հեռուստադեմքերից ակնկալում է ոչ միայն պրոֆեսիոնալիզմ (կիրթ խոսք, վստահություն ներշնչող վարք, գրագետ արտահայտչականություն, անաչառ վարքագիծ), այլև արժեքներ փոխանցելու կարողություն: Դա է պատճառը, որ լսարանը գնահատում է հաղորդավարներին, ովքեր անկեղծ կապ են ստեղծում, ցուցաբերում են հարգանք և համապատասխանում են Հանրայինի առաքելությանը: Այդ ակնկալիքից ելնելով էլ քննադատության են արժանացնում կողմնակալ, արհեստական վարք դրսևորող դեմքերին, որոնք գնահատվում են որպես անհամապատասխան՝ Ալիքի առաքելությանը: Լսարանը կարևորում է նոր, տաղանդավոր դեմքերի ներգրավումը՝ բաց քաստինգների միջոցով, վերապատրաստումները՝ գրական հայերենի և արտահայտչականության բարելավման համար, ինչպես նաև համագործակցությունը մշակութային գործիչների հետ՝ վստահությունն ու որակը բարձրացնելու նպատակով:

2.4. Ամփոփում

Այս բաժինը ներկայացնում է հետազոտության շրջանակում իրականացված վերլուծության հիմնական եզրակացությունները, որոնք արտացոլում են Հանրային հեռուստաընկերության (Առաջին ալիք և Առաջին լրատվական ալիք) լսարանի ընկալումները, դիտողական վարքագծի առանձնահատկությունները, բովանդակության վերաբերյալ նախասիրություններն ու ակնկալիքները:

Ներկայացված ամփոփումն ընդգրկում է նաև լսարանի տարբեր խմբերի հետաքրքրությունները ներկայացնող այն գործոնները, որոնք խոչընդոտում կամ նպաստում են Հանրային հեռուստաընկերության դիտման ընդլայնմանը:

Հավաքագրված նյութի հիմնական բացահայտումներն ստորև ներկայացված են կետ առ կետ.

- Ըստ ՖԽՔ մասնակիցների՝ ինչպես ընդհանուր հեռուստատեսության, այնպես էլ Հանրայինի դերը՝ որպես հիմնական տեղեկատվական և ժամանցային հարթակ շարունակում է նվազել՝ պայմանավորված թվային հարթակների տարածմամբ, աշխատանքային գրաֆիկի ճկունության պահանջով և գովազդներից խուսափելու հնարավորությամբ: Ինչպես վկայում են ՖԽՔ տվյալները՝ հատկապես ցածր է դիտելիությունը երիտասարդների շրջանում, որը պայմանավորված է մեդիա սպառման վարքագծի և սովորույթների փոփոխությամբ, ինչպես նաև նրանց հետաքրքրություններին պակաս համապատասխանող բովանդակության առկայությամբ:
- ՖԽՔ տվյալները վկայում են, որ Հանրայինն ընկալվում է որպես «մեր ալիքը», որը լսարանի շրջանում առաջացնում է դրա հետ որոշակի հուզական կապ, ավելի սրտացավ մոտեցում և ավելի մեծ պահանջատիրություն: Լսարանը Հանրայինի առաքելությունը տեսնում է ոչ միայն որպես տեղեկատվական և ժամանցային պահանջմունքները բավարարելու միջոց, այլ նաև որպես կրթական, դաստիարակչական, մշակույթը և ազգային արժեքները պահպանող և տարածող հարթակ:
- Հավաքագրված նյութը ցույց է տալիս որ, Հանրայինը դիտվում է որպես համեմատաբար վստահելի տեղեկատվական աղբյուր՝ հատկապես քաղաքական և հասարակական նորություններին տեղեկանալու առումով: Շատերն այլ աղբյուրներից ստացված տեղեկատվությունը «վավերացնում» են Հանրայինի միջոցով: Առաջին ալիքը դիտվում է որպես ընտանեկան ժամանցի հարթակ, որը միավորում է ընտանիքի անդամներին հայկական ֆիլմերի, սպորտային, ժամանցային և ինտելեկտուալ հաղորդումների դիտման համար: Ինչպես նաև համարվում է համեմատաբար կայուն հեռուստաալիք, որը որոշակիորեն հավատարիմ է իր առաքելությանը և որակի չափանիշներին:
- Միաժամանակ, ՖԽՔ արդյունքները ցույց են տալիս, որ Հանրայինը հաճախ լսարանի կողմից ընկալվում է որպես իշխանամետ և քաղաքականապես կողմնակալ հեռուստաալիք՝ հատկապես ընդդիմադիր տեսակետների և իրադարձությունների վերաբերյալ տեղեկատվության սահմանափակ ներկայացման առումով: Որոշ դեպքերում այն նաև ընկալվում է որպես իրականությունն իդեալականացնող հեռուստաալիք: Այս ընկալումը հիմնական պատճառներից է, թե ինչու են որոշ մարդիկ ասում, որ ընդհանրապես խուսափում են Հանրայինը դիտելուց:
- ՖԽՔ արդյունքներից ելնելով՝ կարելի է եզրակացնել, որ Հանրայինի հիմնական լսարանը կազմում են ավագ սերունդը և միջին տարիքի կանայք, ովքեր նախընտրում են ավանդական մեդիա սպառում և բարձր են գնահատում հայկական մշակույթին, լեզվին և ընտանեկան միջավայրին համապատասխան բովանդակությունը:
- Հավաքագրված տվյալներից պարզ է դառնում, որ Առաջին լրատվական ալիքը քիչ հայտնի է լսարանի լայն շրջանակներին, իսկ տեղեկացված փոքրաթիվ դիտողները հիմնականում այն չեն դիտում բովանդակության կրկնողականության պատճառով: Լուրերին հետևելու համար հիմնականում գերադասում են Առաջին ալիքի գլխավոր թողարկումը: Լսարանի շրջանում նկատվում է միտում՝ խուսափելու մեծածավալ լրատվական և քաղաքական բովանդակությունից՝ նախընտրելով թեթև, կրթական և ժամանցային ծրագրեր:

- Լսարանն, ընդհանուր առմամբ, Առաջին ալիքը համարում է ավելի վստահելի, որակյալ ու համեմատաբար անաչառ, սակայն նշում է, որ բովանդակությունը լիարժեքորեն չի բավարարում տարբեր խմբերի կարիքներն ու ակնկալիքները՝ ստեղծելով տեղեկատվական, կրթական ու ժամանցային անհավասարակշռություն: ՖԽՔ-ների ժամանակ հատկապես շեշտվել է, որ ժամանցային և լրատվական-քաղաքական բովանդակությունը գերակշռում է, մինչդեռ կրթական, դաստիարակչական, մշակութային, ազգային արժեքներին և պատմության պահպանմանը նվիրված բովանդակությունը պակասում է: Չնայած այս պահանջին՝ ՖԽՔ-ների արդյունքները ցույց են տալիս, սակայն, որ լսարանն առավել հակված է դիտել ժամանցային, «թեթև հաղորդումներ», ֆիլմեր և սերիալներ:
- Տվյալները թույլ են տալիս եզրակացնել, որ Հանրայինը դիտարկվում է ոչ թե որպես սովորական հեռուստաալիք, այլ որպես հանրային, պետական արժեք, ինչի արդյունքում լսարանն ունի բարձր պահանջներ՝ որակյալ, բազմաբովանդակ, հանրօգուտ և անկողմնակալ ծրագրերի տեսանկյունից: Ակնկալվող բովանդակային ուղղություններն ու դրանց նկատմամբ պահանջներն են.
  - Տեղեկատվական և քաղաքական բովանդակություն

    Ակնկալվում են առաջնահերթ խնդիրները ամբողջությամբ լուսաբանող, օպերատիվ, բազմակողմանի ու հանրամատչելի լուրեր և վերլուծական քաղաքական հաղորդումներ՝ առանց կողմնակալության:
  - Կրթադաստիարակչական բովանդակություն

    Լսարանն ակնկալում է մանկական նոր մուլտֆիլմեր, պատանիների համար ինտերակտիվ հաղորդումներ, կրթական ֆիլմեր ու ուսուցչի դերը արժևորող նախագծեր: Առաջարկվում է համագործակցություն հանրության շրջանում սիրված ինֆլյուենսերների հետ՝ հատկապես հայրենասիրական, գիտական, մարզային թեմաներով բովանդակության ստեղծման նպատակով:
  - Մշակութային և ազգապահպան բովանդակություն

    Շեշտադրվում է հայկական մշակույթի շարունակական ներկայացումը՝ ժամանակակից ձևաչափով, բայց ազգային արժեքների պահպանմամբ: Կարևորվում է գրական հայերենի կիրառումը եթերում, մարզային կյանքի լուսաբանումը և դասական ֆիլմերի, գրականության նորովի ներկայացումը:
  - Ժամանցային բովանդակություն

    Ժամանցային բովանդակությունն ամենաշատ հավանության արժանացածն է լսարանի շրջանում, ուստի ակնկալվում է իրականացվող նախագծերի և հաղորդումների շարունակականության ապահովում՝ որպես որակյալ ընտանեկան ժամանցի հնարավորություն: Լսարանը կարիք է տեսնում նոր մրցութային նախագծերի, շարունակել արտադրել բազմասերիանոց հայկական ֆիլմեր և իրականացնել որակյալ արտասահմանյան ֆիլմերի և սերիալների կրկնօրինակումներ:
  - Սոցիալական համերաշխություն խթանող բովանդակություն

    Լսարանը դրականորեն է արձագանքում միավորող ու հուզական հաղորդումներին («Սպասիր ինձ») և ակնկալում է նմանատիպ ծրագրերի ընդլայնում՝ համայնքային կապի ու սոցիալական համերաշխության խթանման նպատակով:
- Ըստ ՖԽՔ տվյալների՝ Հանրայինի հեռուստադեմքերը դիտարկվում են ոչ միայն որպես հաղորդավարներ կամ արտիստներ, այլ՝ որպես մշակույթ, արժեհամակարգ ու վարվելակարգ փոխանցողներ: Կարևորվում են կիրթ խոսքը, բնական պահվածքը և լսարանի հետ անկեղծ կապ ստեղծելու կարողությունը, վստահություն ներշնչող արտաքին տեսքն ու հարգալից շփումը:

Օգտագործված աղբյուրների ցանկ

1. Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն. (2024 և 2021) «Կովկասյան Բարոմետր Հայաստան», https://caucasusbarometer.org/am/cb2024am/factsheet/:
2. ՀՀ օրենքը Տեսալսողական մեդիայի մասին, https://www.arlis.am/hy/acts/145079:
3. Հանրային հեռուստաընկերության կայքէջ, https://www.1tv.am/hy/:
4. Հանրային հեռարձակողի 2013-2024 թվականների տարեկան հաղորդումներ, https://www.tvradiocouncil.am/hy/informations/tarekan-haghordum?page=1:
5. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի տարեկան հաղորդում, 2024, https://tvradio.am/wp-content/uploads/2025/03/Report-2024.pdf:
6. Մեդիա շուկայի վերլուծություն. Հայաստան, Զինք նեթվորք, 2024, https://internews.org/wp-content/uploads/2024/03/MMA-FINAL_Arm.pdf :
7. "Georgia: media consumption and audience perceptions research", 2020, https://epim.trust.org/application/velocity/_newgen/assets/TRFGeorgiaReport_ENG.pdf:
8. "Moldova: media consumption and audience perceptions research", 2020, https://epim.trust.org/application/velocity/_newgen/assets/TRFMoldovaReport_ENG.pdf:
9. "Adapt or die? How traditional Spanish TV broadcasters deal with the youth target in the new audio-visual ecosystem", 2020, https://journals.sagepub.com/doi/10.1177/17496020221076983:
10. "Terebi banare: Historicising internet-distributed television and the departure from television in Japan", 2023, https://journals.sagepub.com/doi/full/10.1177/13678779231197698:

Հավելված 1.

Տվյալների հավաքագրման գործիք

Ֆոկուս խմբային քննարկման ուղեցույց

[Մոդերատորը ներկայացնում է հետազոտության թեման և նպատակը]:

Բարև՛ Ձեզ:

Շնորհակալություն, որ ժամանակ եք գտել մասնակցելու մեր քննարկմանը: Ձեր կարծիքը մեզ համար շատ արժեքավոր է:

Մենք իրականացնում ենք հետազոտություն՝ ուսումնասիրելու Հանրային հեռուստաընկերության վերաբերյալ Ձեր պատկերացումները: Քննարկման ժամանակ մենք կզրուցենք Հանրային հեռուստաընկերության կողմից տրամադրվող բովանդակության Ձեր նախասիրությունների մասին:

Քննարկման ընթացքում ես որոշ հարցեր կտամ և բոլորիդ կխնդրում, որ կիսեք ձեր տեսակետները: Սակայն նախքան սկսելը, կցանկանայի պայմանավորվեինք հետևյալ սկզբունքների շուրջ:

Խնդրում եմ հարգել միմյանց կարծիքները:

Նկատի ունեցեք, որ չկան ճիշտ և սխալ պատասխաններ: Մեզ հետաքրքրում են Ձեր անձնական տեսակետները:

Խնդրում եմ, որ լինեք բաց և անկեղծ:

Մենք երաշխավորում ենք Ձեր պատասխանների գաղտնիությունը:

Մենք Ձեզնից չենք հավաքագրելու որևէ տվյալ, որը կարող է ձեզ հետ նույնականացնելու առիթ դառնալ:

Խնդրում ենք, որ իրար չխանգարեք: Ես կվարեմ քննարկումն այնպես, որ բոլորդ հավասար հնարավորություն ունենաք արտահայտվել և հայտնել ձեր տեսակետերը:

Քննարկումը տևելու է մոտ 1ից 1,5 ժամ: Հիշեցնեմ, որ մեր քննարկումը տեսաձայնագրվելու է, սակայն ձայնագրությունից հեռացվելու են բոլոր մասնակիցների դեմքերը, իսկ տվյալները սղագրվելու են անանուն կերպով: Քննարկման արդյունքում դուրս բերված արժեքավոր մտքերը վերլուծվելու են ընդհանրացված կերպով:

Նախքան քննարկումն սկսելը, կցանկանայի ստանալ Ձեր համաձայնությունն այն մասին, որ դուք իրազեկված եք քննարկման ընթացքի մասին, և այն մասին, որ որևէ տեղեկատվություն, որը կարող է բացահայտել ձեր անձը, հրապարակման ենթակա չէ:

Ի՞նչ հարցեր ունեք: Եթե հարցեր չկան, եկեք սկսենք քննարկումը:

ՀԱՐՑԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

1. Եկեք մի փոքր խոսենք այն մասին, թե ինչ դեր ունի հեռուստատեսությունը ձեր կյանքում: Ընդհանուր առմամբ՝ ի՞նչ տեսակի հեռուստաբովանդակություն եք նախընտրում դիտել՝ ժանրային, թեմաների, ժամային կամ ներկայացման ձևաչափերի առումով:

2. Երբ ասում եք Առաջին ալիք, ի՞նչ տիպի կամ բովանդակության հաղորդումներ եք պատկերացնում: *(Մոդերատորին. մասնավորեցնել Առաջին ալիքի և Առաջին լրատվական ալիքի բովանդակության վերաբերյալ:)*

3. Իսկ ինչո՞վ է Առաջին ալիքը տարբերվում այլ հեռուստաընկերություններից կամ ինչո՞վ է նման:

Հարցը տալ միայն Առաջին ալիքը և Առաջին լրատվական ալիքը դիտողներին:

4. Հիմնականում ինչու՞ եք դիտում Առաջին ալիքը: Ի՞նչն է ձեզ դրդում հետևել Առաջին ալիքին: *(Մոդերատորին.փորձիր պարզել, թե որոնք ենք դիտելու շարժառիթները, օրինակ՝ բովանդակությունը, հեռուստադեմքերը, լեզվամշակութային համապատասխանությունները, ձևաչափերը, ցուցադրման ժամերը):*

Հարցը տալ միայն առաջին ալիք չնախընտրողներին և հեռուստատեսություն չդիտողներին:

5. Ի՞նչն է խանգարում, որ դուք հակված չեք կամ խուսափում եք հետևել Առաջին ալիքի հաղորդումներին: *(Մոդերատորին. փորձիր պարզել, թե որոնք են խուսափման խթանները, օրինակ՝ վստահության պակասը, բովանդակության անհետաքրքրությունը, բովանդակությունը ներկայացնող դեմքերը, լեզվամշակութային անհամապատասխանությունները, ձևաչափերը, անհարմար ժամերը, այլընտրանքային մեդիա աղբյուրների գերակայությունը և այլն):*

6. Ի՞նչ բովանդակություն կուզեիք տեսնել հանրային հեռուստաընկերության եթերում, որ չեք գտնում *(ժանրային, ձևաչափային, հեռուստադեմքերի և այլ իմաստներով):*

7. Ի՞նչ փոփոխություններ կամ բարելավումներ կցանկանայիք Հանրային հեռուստաընկերության ծրագրերում:

Հավելված 2.

Ֆոկուս խմբային քննարկումների ամփոփ աղյուսակ

	N	Մարզ	Բնակավայրի տիպ	Արական	Իգական	Մինչև 40 տ.	41 տ. և բարձր	Բարձրագույն կրթությամբ	Ոչ բարձրագույն կրթությամբ
	1	Երևան	Քաղաքային	1	7	3	5	7	1
	2	Երևան	Քաղաքային	1	7	2	6	6	2
	3	Երևան	Քաղաքային	1	8	5	4	8	1
	4	Երևան	Քաղաքային	0	8	1	7	8	0
	5	Երևան	Քաղաքային	0	8	4	4	7	1
	6	Երևան	Քաղաքային	3	6	1	8	7	2
	7	Արագածոտն	Գյուղական	3	6	7	2	5	4
	8	Արագածոտն	Քաղաքային	0	10	4	6	6	4
	9	Արարատ	Գյուղական	0	9	3	6	6	3
	10	Արարատ	Քաղաքային	0	10	5	5	8	2
	11	Արմավիր	Գյուղական	5	5	10	0	2	8
	12	Արմավիր	Քաղաքային	1	8	5	4	7	2
	13	Գեղարքունիք	Գյուղական	5	7	4	8	2	10
	14	Գեղարքունիք	Քաղաքային	3	8	6	5	1	10
	15	Լոռի	Գյուղական	1	9	4	6	4	6
	16	Լոռի	Քաղաքային	5	9	7	7	8	6
	17	Կոտայք	Գյուղական	1	7	2	6	8	0
	18	Կոտայք	Քաղաքային	6	5	11	0	7	4
	19	Շիրակ	Գյուղական	0	8	5	3	3	5
	20	Շիրակ	Քաղաքային	3	6	0	9	4	5
	21	Սյունիք	Գյուղական	2	9	1	10	2	9
	22	Սյունիք	Քաղաքային	2	6	6	2	1	7
	23	Վայոց Ձոր	Գյուղական	3	6	2	7	2	7
	24	Վայոց Ձոր	Քաղաքային	1	9	3	7	4	6
	25	Տավուշ	Գյուղական	0	8	6	2	2	6
	26	Տավուշ	Քաղաքային	1	9	10	0	3	7
Ընդհանուր				48	198	117	129	128	118

Հավելված 3.

Համաձայնության թերթիկ

Ներածություն

Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան (ՀՌԿԿ-Հայաստան | CRRC-Armenia) հիմնադրամը Հանրային հեռարձակողի խորհրդի պատվերով իրականացնում է հետազոտություն՝ ուսումնասիրելու Հանրային հեռուստաընկերության լսարանի ընկալումները, բովանդակության նախասիրություններն ու ակնկալիքները և նոր լսարանի ներգրավման հնարավորությունները:

Սույն ձևաթուղթը նպատակ ունի տրամադրել Ձեզ անհրաժեշտ տեղեկատվություն՝ ֆոկուս խմբային քննարկման (ՖԽՔ) մասնակցության հարցում որոշում կայացնելու համար:

Գաղտնիություն

Մեր աշխատանքի բարձր որակի ապահովման և հնչեցված մտքերը բաց չթողնելու նպատակով քննարկումը տեսաձայնագրվելու է, սակայն ձայնագրությունից հեռացվելու են բոլոր մասնակիցների դեմքերը, իսկ տվյալները սղագրվելու են և քննարկման արդյունքում դուրս բերված արժեքավոր գաղափարները վերլուծվելու են բացառապես անանուն և ընդհանրացված կերպով: Քննարկումը տևելու է 1ից 1,5 ժամ:

Մասնակցության ընթացքում Դուք ազատ եք չպատասխանելու այն հարցերին, որոնք Ձեզ անհարմարություն են պատճառում կամ որոնց չեք ցանկանում պատասխանել: Քննարկման ընթացքում ցանկացած պահի կարող եք նաև կասեցնել Ձեր մասնակցությունը՝ առանց որևէ հետևանքի:

Որոշ խմբային քննարկումներին ներկա կլինի նաև Հանրային հեռարձակողի խորհրդի մեկ ներկայացուցիչ, քանի որ նրանք անկեղծ ցանկություն են հայտնել բարելավելու Հանրային հեռուստաընկերության բովանդակությունը՝ ելնելով լսարանի իրական կարիքներից:

Հետադարձ կապ

Սույն համաձայնության ձևում ներկայացված տվյալների հետ կապված, ինչպես նաև խմբային քննարկումից հետո ցանկացած հարցերի դեպքում կարող եք դիմել Սեդա Անանյանին՝ +37498207673 հեռախոսահամարով կամ seda.ananyan@crrc.am էլ. փոստի հասցեով:

Համաձայնության

Ես կարդացել եմ վերը նշված տեղեկությունները, հնարավորություն եմ ունեցել հարցեր տալ այդ տեղեկության վերաբերյալ և իմ բոլոր հարցերին ստացել եմ սպառիչ պատասխաններ:

Ստորև ստորագրությամբ՝ համաձայնում եմ մասնակցել խմբային քննարկմանը:

Անուն-ազգանուն և ստորագրություն_____

Ամսաթիվ _____

Հավելված 4.

Արձանագրության նմուշ

Սույնով արձանագրվում է, որ 2025 թվականի

_____ -ին՝ ժամը _____ -ին,

_____ հասցեում

տեղի ունեցավ դեմառդեմ ֆոկուս-խմբային քննարկում *«Հանրային հեռարձակողի նկատմամբ լսարանի վերաբերմունքի, բովանդակային նախընտրությունների և ակնկալիքների ուսումնասիրության»* շրջանակներում:

Քննարկմանը մասնակցեց _____ հոգի, այդ թվում՝ _____ կին, _____ տղամարդ:

Մասնակիցների տարիքային միջակայքը՝ _____ :

Մասնակիցների բնակության մարզը՝ _____ :

Մասնակիցներից _____ -ը ունեին բարձրագույն կրթություն:

Արձանագրությունը վավերացվում է ստորագրություններով:

ԴԵՐ	ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ	ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Մոդերատոր		
Օգնական		
Հանրային հեռարձակողի ներկայացուցիչ-ունկնդիր		
Ծրագրի ղեկավար	Հայկ Սմբատյան, ՀՌԿԿ-Հայաստանի հետազոտությունների գծով փոխտնօրեն	